



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1526

1527

բան, Թիֆլ. Բնկեր. հայերէն պրերի հրատարակութեան

83 - 3
4 - 15

№ 32

Դ. ՎԱԼԻ ԴՆԵՐ

1528

1529

ՀԱՅԱՍՏԱՐԻՄ ՍԱՎԻՏՐԻՆ

ԵԶՐԵՆԵ ՍՊԻՐԻ

ՈՒՐԵՆՅ ՅՈՎՍԵՓ

ՄՊ.Բ. Ա.ՕՉԵՆԴ.Ա.Ց.

ՆԱԻԻ ՓՈՔՐԱԽՈՐԸ

Կ.Ա.Մ

ՊԱՏՈՒԻՐ ՀՕՐԴ ԵՒ ՄՈՐԴ

ՓԵՐԴԻՆԱՆԻ ՃՄԻԳԸ

ՆԱԼ ԵՒ ԴԱՄԱՅԵԱՆԹԻ

ՀԵԴԿԱԿԱՆ ԱՌԱԿ

2011

ուստի պահանջման դիմությունը կազմութեան մասին գործությունը կազմութեան մասին գործությունը կազմութեան մասին գործությունը կազմությունը կազմությունը կազմությունը

Հրատ. Թափլ. Բնիքը. հայերէն պրքերի հրատարակութեան

83-3
Հ-81

№ 30

ԳԵՐԴԻՆԱՆԴ ՃՄԻԴՏ

ՆԱԼ ԵՒ ԴԱՄԱՅԵԱՆԹԻ

1002
6096
8

ՃՆԴԿԱԿԱՆ ԱՌԱԿ

Գերմաներէնից Թարգմանեց
ՅՈՎԱՆՆԻՍ ԼԵՂԱՅԵԱՆ



Թ. Ի Գ Լ Ի Զ

ՅՈՒ. ՀՈՅԵԱ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈԳԱՑ, № 1, 2

1891

Անձր տեհաւութեան եպը ուր
Եպօմքութեան Հայոսական Պիտուկն
Հայութ Գրուստունէցւու Ազն
Օպութ Առաջն Տարբաշին

1. Ո ՍԿ Ե Ս Ե Գ Բ 28 ՄԱՅԻ 1919 թ.

Հին ժամանակ չնդկաստանում մի թա-
ղաւոր կար, անունն էր Բիմա: Կա ամեն բան
ունէր, ինչ որ սիրու ուզում էր, միայն զա-
ւակ չունէր: Կա աստուածներին ուխտ արաւ,
և աստուածները, լսելով նրա աղաչանքը, նրա
կնոջը որդիք տուին երեք հատ աննման, սի-
րուն տղերք եւ մի աղջիկ: Բայց աղջիկը, որի
անունն էր Գոմայշանեկ, թէ խելքով և թէ դե-
գեցկութեամբ իւր եղբայրներից գերազանց էր.
մինչև անդամ անկարելի էր այն ժամանակ
նրա նման աղջիկ գտնել, ուստի և նրա հըռ-
չակն աշխարհիս ամեն կողմը տարածուեցաւ:
Ո՞ր գարդ ու զարդարանքը կարսդ էր նրան
աւելի զեղեցկացնել քան իւր յատուկ սիրունու-
թիւնը: Իւր խաղակից չքնազ աղջիկների խմբի
մէջ նման էր նա լուսաշաղ արևին, որ յաղ-
թանակով ճեղքում է ամփերը:

Կոյն ժամանակները չնդկաստանի մի ու-
րիշ տէրութեան մէջ աղբում էր Նուշ, մի

Խօսութեան առաջն ամառ 1891 թ.



Տիգ. Ի. Մարտիրոսյան, Օրб. յլ., ձ. 1/2.



երիտասարդ թաղաւորացն, որ իւր տղամարդի վայել բոլոր առաջինութիւնների համար մեծ համբաւ ունիք: Ինչպէս Գամայնանթին օրիորդների շարքում, նոյնպէս և Նալը իւր երկրի երիտասարդների ու տղամարդկանց մէջ մեծ անուն էր հանել, այնպէս որ նրա հռչակն էլ շատ հեռու տեղեր հասած էր: Այդ պատճառով այնպէս եղաւ, որ երկուսն էլ միմեանց համբաւը լսեցին, երկուսն էլ միմեանց վրայ հրացան, մինչև անդամ երկուսն էլ, տուանց մէկը միւսին տեսած լինելու, սրտով սիրեցին միմեանց:

Նալը՝ շարունակ Գամայնանթու վրայ մտածելով, մի օր զնաց ծաղկաբոյ ծառառուանը, որ պսակաձև պատեր էր իւր ոսկեփառ պաշտինուելի կողմը: Սիրունատես երիտասարդը, զլուխը կրծքին կախած, ծառուղիներով թաղուն յառաջ ու յետ էր քայլում: Յանկարծ նրա աչքին ընկաւ տարօրինակ սագերի մի երամ: Նրանց մէջքը, կործքըն ու պարանոցը սպիտակ էին, իսկ թեկերը փայլում էին ոսկու զոյնով: Պուսիկ վուսիկ մօտեցաւ նրանց որսորդութեան հմուտ իշխանը և յաջողեցաւ նրանցից մէկին բռնել: Երբ նա սագին ուրախ ուրախ վեր բարձրացրեց, սազը բացեց իւր ոսկէ կտացը և մարդկային ձալ-

նով խօսել սկսեց. «Փնձ մի սպանիր, Կալ իշխան, ասաց նա, որովհետեւ իմացած լինիս, որ ես կարող եմ քեզ սկրոյ ծառայութիւն անել: Լաւ լսիր ասելիքս. ես կը թռչիմ, կ'երթամ Գամայնանթու մօտ և նրա տկանջին քո փառքըն այնպէս կը զովաբանեմ, որ այդ օրիորդը երբէք որ և է ուրիշ մարդու այնպէս չի սիրի լնչպէս քեզ»:

Նալը ուրախ սրտով լսեց այդ խօսքերը և խոկոյն արձակեց ոսկէ սագին: Սազը վեր ելաւ բարձրաձայն կարկաչելով և շուտով հասաւ իւր երամին: Իւր երամի հետ նա մժռաւ, դնաց Վեպարբա թաղաւորութիւնը, որ իւր խստացածը զեղեցիկ Գամայնանթուն պատճէ:

Ճիշտ այն միջօցին, երբ օրիորդը իւր խաղակից ընկերուհիների հետ գտնուած էր մի ծաղկաւէտ մարզագետնի վրայ, ուր ընկերուհիներից մի քանիսը պատկներ էին հիւսում, միւսները զուարձալի խաղերով էին զբաղուած, ոսկէ սագերի երամը օդի միջով մօտենուած էր: Զարմանք տիրեց օրիորդներին, մանաւանդ՝ երբ այդ սիրուն թռչունները նրանց մօտ վայր իջան: Նրանք իսկոյն գէպի թռչունները վագ տուին, որ նրանցից մի քանիսին բռնեն: Այս կողմը, այն կողմը վագվզում էին թռչունները, բայց

կայտառ օրիորդներից ոչ մէկին չլաջողուեցաւ
մի հատն անդամ բռնել:

Գամայնեանթին նոյնպէս ընկել էր թրո-
չուններից մէկի հոտելից, որ նրան հօապուրելով
հեռացնում էր իւր ընկերներից: Վերջապէս նա
կանգ առաւ ու ոկուց խօսել ալոպէս.

«Իմամայնեանթի, ալժմ մենք մենակ ենք,
և ես քեզ կարող եմ հաղորդել այն, ինչ որ
սրտիս մէջ պահած ունիմ: Լսած ես երբ և իցէ
երիտասարդ իշխան Նալի անունը, որ թաղա-
ւորում է Կիշադա աշխարհում: Ոչ թէ հողածին
մարդ է նա, այլ կարծես մեզ վրայ իշխող աս-
տուածներից մինն է:»

«Երբէք մի մարդ չէ եղել, որ իւր զեղեց-
կութեամբ ու ձիրքելով նրան նմանէր: Արևի
ծառապալթների պէս հեռու հեռու թափանցել
է նրա հռչակը: Նրա միտքն իմաստուն է,
բազուկը՝ ուժեղ: Ամեն չար բան սանձահարում
է նա՝ թէ իւր երկրի չար մարդկանց և թէ իւր
սրտի չար ցանկութիւնները: Նրա հսկուակնե-
րը նրա արեւով են երգւում. իսկ նրա թշնա-
միները նրա անունը տալիս գողում են: Պա-
տերազմի ամեն արուեստին տեղեակ է. ոչ ոք
չղիտէ նրա պէս սուր, նետ ու նիզակ բա-
նեցնել, և երբէք լսուած չէ, որ մէկը նրա պէս

ձի քշել իմանայ: Հաւատո՞ ինձ, մենք աշխար-
հիս երեսին տեղ չէ մնացել, որ պտտած չլի-
նինք, մինչեւ անգամ դրախտների մէջ էլ մտել,
գուրս ենք եկել, բայց ոչ մի տեղ մի մարդ
չենք տեսել, որ նրան նման լինէր: Զքնաղ
դամալեանթի, ինչպէս որ դու կանանց միջի
մարդարիտն ես, այնպէս էլ նա տղամարդկանց
թագն ու պարծանքն է: Քեզ ոչ մի զարդ չի
ուղակասում աշխարհիս երեսին, մնում է միայն,
որ դու նրան ամուսին առնես»:

Վարդի սկիս կարմրեց օրիորդի երեսը, երբ
նա ասաց. «Ինչպէս որ ինձ բարի համբաւ բե-
րիր Նալի մասին, աղաչում եմ, նրան էլ իմ
մասին բարի բաներ պատմիր»:

— Ասածդ կը կատարուի, շնորհալի՛ օրի-
որդ, պատասխանեց սազը, իւր սոկէ թւերը
փռելով ու վեր ելնելով: Միւս սագերն էլ վեր
թռան ու հետեւցին նրան:

Գամայնեանթին՝ միտքը շփոթուած՝ վերս-
գարձաւ դէպի պալատը, առանց իւր ընկերու-
հիներին հաղորդելու սոկէ սազից լսածը:

2. ՆԱԼԻ ԻԲՐԵՒ ԱՍՏՈՒՄԾՆԵՐԻ ԴԵՍՊԱՆ:

Որքան առաջ ուրախ ու զուարժ էր ալդ
աղջիկը, նոյնքան այժմ տիսրեց նա: Ճարանակ

աստուածանման պատանու վրայ. մտածելով,
նա հրաժարուեց ամեն բանից, ինչ որ առաջ
նրա սիրտն ուրախացնում էր: Տիտոք որտով
նկատում էին նրա խաղակից ընկելուհիները,
թէ ինչպէս իրենց սիրելիի թշերի կարմիրը
գնում էր. և նրանք վճռեցին լշխանի ուշքը
իւր աղջկայ փոխուած վիճակի վրայ դարձնել:
Խշխանը շատ այս ու այն կերպ մտածեց, թէ
ինչ պէտք էր անել Գամայեանթուն ուրա-
խացնելու համար: Վերջապէս կանդ առաւ այն
մտքի վրայ, թէ պէտք է բոլոր հարեան տէ-
րութիւնների լշխաններին մի մեծ հանդէսի
հրաւիրել: Այդ հանդէսը, իւր կարծիքով, իւր
աղջկանը պիտի ուրախացնէր: Կա մինչեւ ան-
գամ մտածում էր հանդէսի ժամանակ Գա-
մայեանթուն առաջարկել, որ լշխաններից մէ-
կին իւր համար փեսայացու ընտրէ: Խկոյն նա
ամեն կողմ սուրհանդակներ ուղարկեց, որ իշ-
խաններին հետևեալ խօսքերն ասեն. «Եկէք, քա-
ջեր, Գամայեանթու փեսալընտրութեան հան-
դէսը: Ճշմարիտ՝ ամենազեղեցիկ կնոջ աէրը կը
դառնայ այն մարդը, որին աղջիկս յօժար կամ-
քով իրեն ամուսին կ'ընտրի»:

Ճատ չանցաւ, և ահա եկան, ժողովուեցան
աշխարհիս ամեն ծալրերից թաղաւորներ, թա-

գաւորադներ. ամեն մէկն իւր որտում փափա-
գում էր Գամայեանթու ամուսինը զառնալ: Մի
քանիսը զալիս էին լժանզադին, ոսկեզարդ ձի-
եր հեծած, միւսներն ընտիր փղերի վրայ բազ-
մած: Ի՞նչ տեսակ տեսակ զարդարանք ասես,
որ չգտնուէր լշխանների ու նրանց նազիր
վեղիրների վրայ: Բիման, Գամայեանթու հայ-
րը, սիրով ընդունեց ամենքին և ամեն օր նոր
նոր հանդէսներ էր սարքում նրանց համար:

Ուզիղ այն միջոցին, երբ լշխանները հրա-
ւիրուած էին Բիմալի մօտ, բարեպաշտ մարդա-
րէ Նարարան մտաւ աստուածների պարտէզը:
Բարեզութ իննումքով ընդունեց նրան օդի աս-
տուած Բնորան: Կա դարձաւ դէպի մարդարէն,
ասաց. «Որդեսակ, պատմիր ինձ, ինչ է պա-
տահել այժմ երկրի երեսին: Ճշմարիտն ասած,
կարծես սովորականից դուրս մի բան կայ այն-
տեղ: Ահա եօթն օր է, որ ոչ մի հատ՝ պատե-
րազմում ընկած զինուոր չէ մտել իմ երկնային
բնակարանը»:

— Պրա պատճառը ես քեզ խսնարհարար
կը յայտնեմ, խօսեց երկիւզած Նարագան, —
փալուն զէնքերն անշարժ կախուած են պա-
տերից. այժմ ոչ ոք նրանց ձեռք չէ տալիս,
որովհետև Բիման քո ամբողջ երկրաւոր պե-

տութեան իշխաններին փեսալընտրութեան է հրաւիրել: Անշուշտ չկայ մի իշխան, որ չըցանկանայ Գամայնեանթուն, աշխարհին ակն ուժարդարտին, իրեն ոեփականել:

Մինչ բարեպաշտ Նարագան արդ բանը պատմում էր օդի աստուծուն, մօտեցան նրանց երեք ուրիշ աստուծներ՝ Ազնին, Վարունան և Ետման: Նրանք Ինդրալի զահակիցներն էին և տիեզերական խորհրդի ժամանակ նրա կողքին էին բաղմում: Ազնին վառ կրակի իշխողն էր, Վարունան տիրում էր ջրերին, իսկ Եաման հողին:

Երբ Նարագան ևս առաւել զովասանքով սկսեց խօսել Գամայնեանթու մասին, չորս երկնայինները վճռեցին վալր իջնել երկիր, որ Բիմայի պալատում վեստընտրութեան հանդիսին մտսնակցեն:

Նրանք իսկոյն հրեշտակներով շրջտապատռած, ձիով ու կառքով, ճոճապահ ընկան և կալծակի արագութեամբ թռան օդի միջով: Այն քաղաքի մօտակալքում, ուր կենում էր Գամայնեանթին, տեսան նրանք Նալին ճանապարհին գնալիս: Նրա զեղեցկութիւնը հրացրեց աստուծներին. Նրանք վալր փջան, և Նալը յանկարծ տեսաւ նրանց իւր զլիսի վերեռմ: Ոի երկիւղած սարսուռ ցնցեց նրա մարմինը. նա

Ճեռները կը քին խաչեց և աչքերը խոնարհեց:

Եւ ահա երկնային թաղաւորներն այսպէս խօսեցին. «Ով քաջ Նալ, ճշմաբախօս պատանի, կը յօժարես արդեօք մեզ մի ծառայութիւն անել, մեր կողմից մի պատղամ տանել»:

Նալը զլուխը բարձրացրեց ու ասաց. «Այն, ով երկնայիններ, պատրաստ եմ»: Յետոյ դարձեալ զլուխը խոնարհելով շարունակեց. «Քէ՛հ, ուրեմն յախտնեցէք ինձ թէ ով էք զուք, և ում պիտի տանհմ ձեր պատղամը»:

Ինդրան պատասխանեց.

— Մենք անմահներ ենք, իմացիր արդ, բայց և այնպէս մինք եկել ենք Գամայնեանթու վեստընտրութեանը մասնակցելու, որովհետև մեզ պատմեցին, թէ նա երկրի երեսի օրիորդների գոհարն է: Ես Ինդրան եմ, օդի իշխողը, սա Ազնին է, կրակի աստուծը, միւսը Վարունան ջրերի տիրապետողը, իսկ այն միւսը Եաման հողի ինքնակալը: Ե՛կ գու մեր զեսպանը եղիր, զնա օրիորդի մօտ ու ասա նրան՝ Տարերքի աստուծները, աշխարհը ոլահպանողներ՝ Ինդրան, Ազնին, Վարունան և Եաման եկել են հարսնախօս: Մահկանացուներին թող և սատուածներից մէկին քեզ ամուսին ընտրիր:

Սարսափը տիրեց Նալին, երբ այս խօսքերը լսեց, երեսի գոյնը թռառձ խօսեց նա.

—Ով ասոււածներ, միթէ ինձնից պիտի պահանջէիք այդպիսի գժուար բան: Զէ՞ որ իս ինքս էլ էի զնում Գամայեանթու ձեռքը ինդրելու: Խնայեցէք ինձ, և թող մի ուրիշը ձեր պատղամաւրը լինի:

—Ոչ, պատստիսնեցին ասոււածները, հենց գու ինքդ պիտի լինիս: Զէ՞ որ գու ինքդ ուրախ գէմքալ բացականչեցիր՝ այն, պատրաստ եմ ձեզ ծառալութիւն անելու: Գնա ուրեմն, և կատարի խոսանմզ:

Նալը պատստիսնեց.

—Ես ինչպէս պիտի մտնեմ օրիորդի սենեակը, որ ձեր առածը նրան հաղորդեմ:

—Մենք այնպէս կ'անենք, որ քեզ ոչ ոք արգելք չինի, վրայ բերաւ ինդրան: Սակայն վաղը այս ժամին գու դարձեալ ալստեղ պիտի լինիս և մեզ պատստիսն բերես:

Ասոււածներն այս ասելով համբարձան, իսկ Նալը խոռված սրտով դիմեց դէպի քաղաք:

ՅԱԼ ԵՒ ԳԵՄԱՅԵԱՆԹԻ

Հենց որ Նալը Գամայեանթու պալատը հասաւ, ասոււածներն այնպէս արին, որ նա յանկարծ կանգնեց այն զահլիճի մէջտեղում, ուր խմբուած էին Գամայեանթին և իւր ընկերու հիները: Այդտեղ ոկրում նրան ոչ ոք չտեսաւ, և նա երկար ժամանակ աղատ նայում էր Գամայեանթին: Գամայեանթին իւր երեակայածից աւելի գեղեցիկ երեւոց նրան, և նա աւելի մեծ ցանկութիւն զգաց նրան իրեն կին առնելու: Բայց նա մտաբերեց ասոււածներին տուած խոստումը և երգուեց իւր խոստումը պահել: Եւ ահա նա յանկարծ երեաց օրիորդների աչքին: Զարհուրած վեր թռան նրանք իրենց տեղերից և առաջին վարկեանում զարմանքից ու հիացումից մի բառ անդամ չկարողացան արտասանել: Նրանք Նալին ասոււած կարծեցին, այնքան զեղեցիկ թուեցաւ նա նրանց: Իրենց սրտումը նրան փառաբանելով՝ շրջապատեցին նրան քիչ ժամանակ, յետով Գամայեանթին մօտեցաւ ու ժպիտը բերնին ասաց.

—Ով ես գու, այ աննման տղայ, որ յանկարծ մեր մէջ յայտնուեցար, թէպէտել պալատի բոլոր մուտքերը բաղմաթիւ պահա-

պաններով բոնուած են: Իրաւ, դու աստուածներից մինը պիտի լինիս, որ յաջողեցար ներս մտնել. այդ վկայում է և քո աստուածալին կերպարանք:

Նալը պատասխանեց.

— Աստուած չեմ ես, ով հրեղէն աղջիկ; այլ աստուածների պատգամաւոր: Նրանք ինձ քեզ մօտ աւդարիեցին, որ իրենց համար հարսնախօս լինիմ: Ինդրան, Աղնին, Վարունան և Եաման ամեն մէկը փափաղում է քեզ իրեն սեփականել: Ընտրիք ուրեմն այդ աստուածներից մէկին քեզ ամուսին: Նրանք ինձ թուլառին աներեւթարար այս պալատը մտնել: Մտածիք ուրեմն, այ աննման աղջիկ, թէ ինչ պէտք է անես:

Գամայեանթին ձեռներն իրար կցեց ու սկսեց աղօթել աստուածներին: Յետով կարմրելով ասաց.

— Երկնքի և երկրի իշխողների մէջ չկայ ոչ մէկը, որ ինձ այնքան զիւր դար, որքան դու, վսեմ պատանի: Գտւ ես, որ մլշտ մտքիս մէջն ես եղել, քնած թէ արթոն միջոցիս: Ինչ էլ որ ինձնից պահանջես, ես քեզ չեմ մերժիլ. ինչ որ ունիմ ու չունիմ, ես ինքս ու իմ բոլոր հարստութիւնս քոնք կը լինինք: Տես,

սիրտս է ինձ մղում, որ այդ խօսքերը քեզ յախտնեմ: Վայ է ինձ, եթէ այս խոստովանութիւնից յետով դու ինձ թողնես. այն ժամանակ մահը պիտի դայ ինձ տանի: Որովհետեւ ինչպէս կարող է այլ ևս ապրել այն աղջիկը, որ ինքը իւր ձեռքը առաջարկել է մի մարդու և մերժումն է ստացել նրանից:

Նալը պատասխանեց. «Լաւ մտածիր, ով աննման, թէ ինչ է արածդ: Աստուածներն են խնդրում քո ձեռքը, իսկ դու ուզում ես մի մահկանացու քեզ ամուսին ունենալ: Երարած աշխարհքի ստեղծողներն են ինձ այստեղ ուղարկել: Նրանք այնքան բարձրիշխան են, որ ես նրանց ստքի վոշուն անդամ չեմ կարող հաւասարուել: Նրանց հակառակողը պիտի չքանալ, լաւ միտք արա, Գամայեանթի: Իմ կեանքըն էլ կ'ազատես, եթէ աստուածներից մէկին ընտրես: Ահ, ինչ հրաշալի կերպով դու զբոսանք կ'անես երկնքի պարտիզում. ինչ թանգաղին քարելով ու վառաւոր հաղուստներով կը զարդարուիս գու այնտեղ: Ինչու ես ուզում ձեռքիցդ բաց թողնել այն տեսակ բաղդաւորութիւն, որ երբէք որ և իցէ մահկանացուի վիճակուած չէ եղել: Ոի մտանար, Գամայեանթի, որ ամենազօր Աղնին, նա՝ որ բոլորել է

անուահման երկնակամարը, որի մէջտեղում կախուած է երկիրը, նաև որ ամեն արարածի շունչ և լոյս է տալիս,—Եաման, որի զալիսանի դիմաց բալոր արարածները արդարութիւնն են պաշտում,—Ինդրան, այն գերազոյն թագաւոր աստուածը, որ մազերն անդին քարերով զարդարած հանդչում է օգեղէն փափուկ կողինքի վրայ, —Արունան, որ իւրաքանչիւր կենդանի արարածին իւր տեղն է տալիս և մարդկանց հոգիները գատաստանի է կանչում,—մի մոռանար, որ այդ չորս զօրաւոր աստուածներն են խնդրում քո ձեռքը: Ո՞ր մահկանացուն կը վարանէր նրանցից մէկին ընտրելու:

Օրիորդի սիրուն աչքերը արցունքով լցուեցան, երբ նա ասաց.

—Ա՞ս, ես նրանց կը պաշտեմ, կ'երկըպագեմ այդ վիշագոյն սուրբ աստուածներին, իսկ քեզ պիտի սիրեմ, քեզ պիտի ինձ ամուսին ընտրեմ այստեղ, այս աշխարհում:

Ի՞նչպէս թնդաց ազնիւ իշխանի սիրոր, երբ նա այդ խօսքերը լսեց: Սիրու մզում էր նրան նազիլի օրիորդին իւր զրկի մէջ առնել և ամբողջ աշխարհի տռած նրան իւր կինը հռչակել: Սակայն, լիշելալ աստուածներին տը-

ւած խոստումը, զսպեց ինքն իրեն ու դողդոցուն ձայնով խօսեց. «Ի՞նչպէս պիտի համարձակուեմ ես, որ աստուածների կողմէց դեսպան եմ եկած, այժմ իմ մասին խօսք բաց անել: Ես այստեղ նրանց սրբազան պատգամը կատարելու համար եմ կանգնած: Երբ ժամանակը կը գայ, որ ես ինձ համար զործեմ, հաւատա ինձ, ով սիրուն ու սպարկեցտ աղջիկ, ես իմ զործը քաշութեամբ զլուխ կը բերեմ»:

Նորից պայծառացաւ օրիորդի արտասուածոր դէմքը, և ամօթիւած ձայնով խօսեց նու.

—Ազնիւ իշխան, ես արդէն մտածեցի թէ ինչ պիտի անեմ, որ աստուածները քեզ վրայ չբարկանան: Թող նրանք էլ, ինչպէս դու, ով աննման, և ինչպէս միւս իշխանները, իմ վիեսալընտրութեան հանդիսին ներկայ լինին: Այստեղ արդէն ամենքի առաջ ես քեզ ինձ ամուսին կ'ընտրեմ:

Օրիորդի այս խօսքերից յետով Նալը մնաս քարեւ ասաց նրան, թողեց պալատն առանց պահապանների աչքին երևալու, և զնաց այնտեղ, որտեղից աստուածները նրան ուղարկել էին, և եղելութիւնը պատմեց նրանց:

4. ՓԵՍԱՅՅԻՆՏՐՈՒԹԻՒՆ

Սքանչելի առաւօտ լուսացաւ այն օրը, որ
Բիժա թագաւորը փեսալընտրութեան համար էր
նշանակել: Եւ ահա ամեն կողմից ժողովուեցան
իշխանները, լիառահեղ դարձաբաւած, առիւծի
նման աներիիւղ դէմքենավի: Երկար ու ձիղ սիւ-
նազարդ սրահի միջավ հպարտ հպարտ առաջ-
քալելով՝ գիմեցին նրանք դէպի պալատի ամե-
նամեծ դահլիճը, ու դահլիճ շարչը շարուած
թանգաղին բարձերի վրայ բազմեցան:

Աւրախութեան ժամին երեսին խոռեց Բի-
ման. «Ո՞վ է տեսել մի տեղ իշխանների այսպի-
սի ժողով: Կերս բերէք այժմ Գամայնութիւն,
որ նա իւր սեփական հաւանութեամբ իրեն
ամուսնացու ընտրէ»:

Ճատ չանցաւ, և ահա բացուեցան ոսկէ-
զօծ երկիեղի դռները, ու ներս մտաւ պարկեցաւ
օրիորդը, թանգաղին հագուստով, մարդաբատա-
շար մանեակներով ու զոհարներով զուգուած.
Բայց նա իւր յատուկ զեղեցկութեամբ ըսլոր
ակնեղէններից դերազանց էր: Եւդ բոնէին դահ-
լիճը կարծես աւելի լուսաւորուեցաւ: Գամայնա-
թուց ճառ ադայթող լոյսն ամենքի աչքերը
փալեցրեց: Իշխաններից ամեն մէկն աւելի քան

երբ և իցէ ցանկութիւն զգաց նրան իրեն
ամուսին ունենալու: Նրա տեսքը շատերի ուշք
ու միտքը շփոթեց:

Երբ մի հրաւիրակ իշխանների անուններն
արտասանեց, Գամայնանթիւն տեսաւ հինգ ան-
ձեր, որոնք բոլորն էլ ձիշտ նման էին Նալին:
Նրա աչքերն ապշած թափառում էին մէկից
դէպի միւսը, բայց նա ոչ մի զանազանութիւն
չէր գտնում նրանց մէջ: Ի՞նչ պիտի անէր:
Յուսահատութիւնը տիրեց նրան: Ո՞րն էր ար-
դեօք Նալ թագաւորը: Նա մտաբերեց աս-
տուածների նշանները, որոնց մասին քուրմերը
պատմել էին, և նորից նայեց, որ տես-
նի թէ որ անձանց վրայ կարելի էր տեսնել
այդ նշանները: Բայց ոչ մէկի, և ոչ միւսի վր-
այ որ և իցէ նշան չտեսաւ: Երբ նա յուրը
կտրած՝ այլ ևս ինչ անելը զղիտէր, ձեռ-
քերը կցեց իրարու և խը սրտի խորքում այս-
որէս սկսեց պազատել աստուածներին. «Ո՞վ երկ-
նալին թագաւորներ, ձեզ յայտնի է թէ ինչ
պատմեց ինձ ոսկէ սազը Նալ թագաւորի մա-
սին: Հենց այն ժամանակ ընտրեցի ես նրան
ինձ ամուսնացու և նրան յաւիտենական հա-
ւատարմութիւն ուխտեցի: Պուք զիտէք, որ ես
երբէք լոմ աղատ կամքով, ոչ խօսքով և ոչ

դործով ձեր պատուիրանքը չեմ լսալստել: Գլուխէք նոյնակէս, որ ես երգումը բերնիս մտալ այս դահլիճը, որ միմլայն նրան ինձ ամուսին ընտրեմ: Ուրեմն այնպէս արէք, ով երկնայիններ, որ ես նրան ճանաչեմ, որպէս զի իմ իղձս և իմ ուխտս կատարուի»:

Եթի աստուածները կոլսի ջերմ անձնուիրութիւնը, հաւատարմութիւնն ու սրտի մաքրութիւնը տեսան, վճռեցին նրա սրտի ուզածն անել: Յանկարծ կերպարանափոխ եղան նրանք, և օրիորդը տեսաւ աստուածներին օդի մէջ զեր համբառնալիս: Երկնային մի վայլ պատեց անմահներին. ոչ մի շուաք չէին արձակում նրանք, և անթառամ պատկներ էին շողշողում նրանց գլխին: Այժմ ահա տեսաւ օրիորդը Նալ իշխանին միւս սիրահարների շարքում: Կարմրելով մօտեցաւ նրան նազելին, տեղական սովորութեան համեմատ ձեռքը քսեց նրա վիշշին և յետոյ անց կացրեց նրա վզին թարմ ծաղիկների մի պսակ:

Փող ու թմբուկ հնչեցին, քուրմերն աղօթքներ կարգացին, մինչեւ անգամ աստուածներն օրհնութիւն ուղարկեցին երկնքից:

Այժմ խօսեց Նալը, որ ուրախութիւնից դողացող օրիորդի ձեռքը բռնած ունէր. «Որով-

հետև գու աստուածների առջև ինձ, մահկանացուխ ընտրեցիր, իմացիր ուրեմն, ով սիրասուն, քանի որ հոգիս այս մարմնիս մէջ կը բնալուի, ես միշտ քո սիրող և հաւատարիմ ընկերը կը լինիմ: Այսուհետև քո երջանկութիւնը իմից չպիտի բաժանուի»:

Այս առելով նա ամենքի առաջ դրկեց իւր նշանածին: Երկուսն էլ իրենց երանութեան մէջ, աչքները դէպի վեր գարձնելով, տեսան աստուածներին և իսկոյն ծունկ չոքելով աղօթք արին:

Փառահեղ կերպով կատարուեցաւ երջանիկ ամուսինների հարսանիքը: Բոլոր իշխաններն ընծաներ տուին նոր թագաւորին ու թագուհուն, իսկ աստուածներն ամենասիրուն ընծաներ պարգևեցին նրանց: Նալը ստացաւ չորս երկնային շնորհէք՝ օդի աստուծուց ստացաւ նա կարողութիւն ամեն տեղ, որտեղ սիրոն ուզի, անխափան շրջելու. կրակի աստուծուց ստացաւ զօրութիւն աներեւովթ կրակը տեսնելու և ամեն ժամանակ, երբ որ ուզենալ, կրակի բոցեր գոյացնելու. երկրի աստուածը տուեց նրա ստքերին ամրութիւն և կերակուր պատրաստելու շնորհէք, և վերջապէս ջրի աստուածն ընծանեց նրան – իշխանութիւն ջրերի վրայ: Իսկ փամակեանթին լսեց նրանց բերնից ալն աւե-

տումը՝ թէ նա շուտով մայր կը դառնայ և մի սիրուն աղջիկ ու մի սիրուն. տղայ կ'ունենայ: Հարսանիքը վերջացաւ, աստուածները դնացին իրենց երկնային օթևանը, և իշխանները թուղեցին քաղաքն ու վերադարձան իրենց երկիրներն իրենց տէրութիւնը կառավարելու: Մի քանի օր միայն մնացին նորապահները Գամայեանթու հայրենիքում: Այսուհետեւ նաև առաւ իւր սիրած ամուսնուն և վերադարձաւ իւր հայրենիքը: Բաղդաւոր ապրեցան նրանք, իրենց ժողովրդին էլ բաղդաւորացրին:

Ը. ԶԵՐ ՈՒԻ ՔԱՂԻՆ

Երբ չորս աստուածները Գամայեանթու վեսալինտրութեան հանդիսից վերադարձան, մօտեցաւ նրանց Քալի ասուած չար ողին: Գլարապա գել, ալդ չար ողու ծառան, նրա հետըն էր: Ինդրան դարձաւ ասաց. «Դէպի մւր, Քալի, մւր ես դնում»:

Քալին պատասխանեց. «Միթէ չէք լսել Գամայեանթու անունը, որ բոլոր աղջիկների ակն ու մարդարիտն է: Գնում եմ նրան ինձ կին առնելու»:

Ինդրան ժպտալով վրայ բերաւ. «Ճատ ու շայել ես, Քալի, եթէ ուզ է միտք, սրով-հետև Գամայեանթու վեսալինտրութիւնը արդէն վերջացաւ: Բայց եթէ հենց այստեղ էլ լինէիր, քո ձեռքը ոչինչ չէք ընկնիլ: Զէ որ մենք էլ ներկայ էինք, բայց ինչ անես, որ Գամայեանթին ընտրեց մի մահկանացու, նիշագայի իշխան Նալին»:

Այդ լսելուն պէս Քալին կատաղեց. Նրա բերնից ու աչքերից կրակ էր թափուում: Լիօնեսելիս:—Ահ, կանչեց նա, Գամայեանթին շատ կը զղայ, որ մահկանացուին ատտռածներից վեր դասեց: Նրան վշտացնելու համար Նալի գլուխը մեծ վտրձանքների տակ կը ձգեմ: Իմ անէծքը նրան կը կործանի:

Այս խօսքերի դէմ խօսեցին աստուածները: — Ալպէս չպիտի վարուժի, Քալի, ասացին նրանք, որովհետև Գամայեանթու արածը միը կամքին համաձայն էր: Ո՞ր օրիորդը չէք ուզգիլ Նալի կինը դառնալ: Ոչ մի բանի մէջ նրան փուտ դնել չի կարելի: Ամենայն ճշտութեամբ կատարում է նա իւր իշխանական պարտականութիւնները և արդարագատ, բարեսիրտ ու ողորմած է դէպի իւր հպատակները. ամենայն օր կարդում է սուրբ զքքերը և

աստուածներին մատուցանում է նրանց արժանի զոհել։ Իւր կեանքումը իւր տուած խօսքից յետ չէ կանգնել։ Նրա բնաւորութեան մէջ միատեղ ձուլուած են ամենաբարձր առաքենութիւններ՝ մեծահոգութիւն, արժանապատութիւն, համբերութիւն, որժ, ժուժկալութիւն և մաքրութիւն։ Զկայ երկրի վրայ մի իշխան, որ իւր առաքինութեամբ նրան դերագանցէր։ Զգուշացիր ուրեմն, Քայլ, նրան անիծելուց։ Այդպիսի իշխանին անիծողը ինքը ոտքով զլխով կը կորչէ։ Մեր զօրութիւնը նրան գժոխքի անդունդը կը զլորէ։

Ինդրայի այս խօսքերից յետոյ աստուածները երկինք համբարձան։ Իսկ Քայլին դարձաւ դէպի իւր ծառայ Դվարապան և ասաց. «Ինչ կ'ուզէ լինի, ես Նալին չեմ թողնիլ, ես նրան կը փճացնեմ։ Հենց որ ինձ յաջողի նրա կուրծքը մտնել, այլ ևս հեշտ է ինձ համար նրան իւր տէրութիւնից ու կոտջից զրկել։ Պաւ, Դվարապա, պիտի մտնես մի քուէախաղի (նարդի) մէջ, որով ես նրան ժամը հասնելուն պէս պիտի կործանեմ»։

Այդ օրից սկսած՝ Քայլին անդադար աներեսով պտտում էր Նալ թագաւորի շուրջը, բայց նրան չէր յաջողում Նալի սրտի մէջ բուն

դնել։ Սիրուն դաւակներով ուրախանում էր իշխանի սիրտը. նա որբութեամբ կատարում էր իւր բոլոր պարտականութիւնները՝ իրեւ ամուսին, իրեւ հայր և իրեւ իշխան։ Այդպէս անցաւ եօթը տարի։ Մի երեկոյ մոռացաւ նա լուացուել, ինչպէս պահանջում էր իւր երկրի սրբազն աւանդութիւնը։ Այդ բանը նկատեց Քայլին և իսկովն ներս թափանցեց իշխանի մինչեւ այն օրն առաքինի մնացած սրտի մէջ։

6. Կ Ա Ր Գ Ի

Նալ թագաւորը մի խորթ եղբայր ունէր, Փուշքարա անունով, որի իշխանութեանը յանձնուած էր մի քաղաք։ Ճատ տարիներ հանգիստ ու գոհ ապրում էր այնտեղ Փուշքարան։ Մի զիշեր երազումը մօտեցաւ նրան չար Քայլին և ականջումը շշնջաց. «Վեր կաց, Փուշքարա, վեր առ նարդու քուէները, գնա Նալ թագաւորի մօտ և խելքից հանիր նրան, որ նստի քեզ հետ նարդի խաղայ։ Ես այնպէս կ'անեմ, որ գու խաղի մէջ նրա տէրութիւնը կը տանես ու Նիշագալի թագաւորը կը դառնաս»։ Երեք անգամ երազումն այս ձայնը լսելուց յետոյ, Փուշքարան առաւ նարդու քուէ-

ները, որոնց մէջ բուն էր դրել Գովարապան, զնաց Նալ թագաւորի մօտ և յորդորեց նրան, որ նարդի խաղան: Նալը, Քալիկց զրգուած, իսկոյն համաձայնեց, և խաղն սկսուեցաւ: Այս—այն կողմն էին թռչում քուէները, և ամեն զցելիս թագաւորը կորցնում էր մի րան: Գամայեանթին ահ ու գողավ նայում էր խողին: Թագաւորը կորցրեց հարստութիւն, կալուածք, թանգաղին հազուստներ, զէնքեր, նժոյգներ ու պալատներ. բայց որքան բաղկը նրանից հեռանում էր, այնքան աւելի վառւում էր նրա մէջ խաղալու կիրքն ու շահախնդրութեան ծարաւը: Անարկներով ու քընքոյշ խօսքերով իրեն աղաջող, պաղատող ամուսնուն բանի տեղ չէր դնում նա, աւելի ու աւելի մեծ զրաներ էր դնում, յուսալով, որ մի յաջող խաղավ բոլոր կորցրածք միանդամից լիտ կը տանի. իցուք: Փուշքարան, որ արդէն զրեթէ մի թագաւորի չափ հարստ էր, տանում էր ու տանում:

Ճուտով ամբողջ քաղաքի մէջ ձայն ընկաւ թագաւորի ձախողակի խաղի մասին, և նրա խորհրդականները, սարստիահար, եկուն պալատի զուռն իրենց սիրած թագաւորին տեսնելու:

Թաղուհուն իմաց տուին թէ քաղաքի խորհրդականներն ու բազմաթիւ քաղաքացիներ կանգնած են դարպանի առաջ և փափազում են ներկայանալ թագաւորին, որի չարն ու բարին իրենց սրտի հոգացողութեան առարկան է: Գամայեանթին մօտեցաւ Նալին և յայտնեց այդ: Ընդունիր խորհրդականներին, աղաջում էր նա, ընդունիր նրանց, նրանց քեզ մօտ բերողըն իրենց անարատ սէրն է:

Թագաւորը ոչինչ չպատասխանեց, ու շարունակեց խաղալ: Գամերով սպասելուց յետոյ՝ խորհրդականները հեռացան: Վայ, ափսոս, ասում էին նրանք սրտները կոտրած, սա այլ ես մեր առաջուան թագաւորը չէ:

Ալգակս ամբողջ օրը խաղալով անցաւ, և Նալն ի վերջոյ անկողին մտաւ, որ այնքան վրդովմունքից յետոյ իւր հանդատութիւնն այնտեղ դժնի. բայց այնտեղ էլ հանդստութիւն չգտաւ, որովհետեւ Քալին անդաղար փոփում էր նրա ականջում թէ՝ ամօթ ու նախատինք կը թափուեն զլիխդ, եթէ դու վաղը քո խորթ եղբօրից յետ չտանես այն բոլորը, ինչ որ նա այսօր քեզնից տարաւ. մինչև այդ չանես, ամենեւին պէտք չէ ականջ դնես ոչ քո ամուսնուն և ոչ քո ժողովրդին:

Հետեւեալ օրն էլ միշտ այնպէս անց կացաւ,
ինչպէս առաջին օրը: Փուշքարան ամեն քաէ ձգե-
լիս տանում էր: Այդ խաղը տևեց մի քանի շաբաթ:
Գամայեանթին, տեսնելով՝ որ իւր տմու-
մինը կրտսեան անդնդի բերանն է հասել,
հրամայեց բարձր խորհրդականներին ժողովի և
տարաւ: Նրանց խազամով թագաւորի առաջ:
Սփրանած դէմքով, բազուկները կրծքներին խա-
չած, զլուխները կախած էին: Նրանք, երբ Գա-
մայեանթին մօտեցաւ իւր ամուսնուն և խօսե-
լով նրանց մատնացոյց արաւ: Բայց թագաւորը
ոչ կնոջն էր նայում, ոչ խորհրդականներին,
այլ իւր խաղն էր շարունակում: Խորհրդական-
ներն ահ ու դոզով գուրս եկան սենեակից: Երբ
Գամայեանթին համոզուեցաւ, որ իւր տմուսի-
նըն անդառնալի կրտսելի է մատնուած, տաց
ինքն իրեն. «Ես որա երջանկութեանը մասնա-
կից էի, ես պիտի մասնակից լինիմ և որա
թշուառութեանը, որ շատ շուտով վրթելու է:
Երեխայքը թող աղատուին»: Արտասուքն աչքե-
րը սղողեց, երբ նա դայեակին ասաց. «Գնա,
Վրիթագենա, ներս կանչիր ամուսնուս կա-
ռապանին»:

Վարշնէան, վարպետ կառապանը, խոկոյն
ներս մտաւ, և թագուհին, արցունքն աչքերին,

դարձաւ դէպի նա. «Դու, որ մինչեւ այժմ մեր
տան հաւատարիմ ծառան ես եղել, դու մի
բարի զործ պիտի անես մեզ համար: Տես, ահս
թագաւորը զրեթէ իւր ամբողջ տէրութիւնը
խաղումը կորցրեց. Նրան համարեա էլ ոչինչ չէ
մնացի՛ բացի ինձնից, երեխաներից ու քեղ-
նից, որ իւր կառապանն ես: Մնում են և մի
զոյդ ձի ու մի կառք: Քանի որ, ի հարկէ, մի
չար ողի ամուսնուս հոգին ու միտքը կապել,
կաշկանդել է, աղատիլ զոնէ մեր զաւակներին:
Նստեցրու նրանց կառքի մէջ, քշիր ու տար
նրանց իմ ծնողաց մօտ: Դու էլ այնտեղ մնա,
կամ եթէ չհաւանես, ուրիշ տիրոջ մօտ ծառա-
յութեան մտիր»:

Կառապանը դարձաւ դէպի խորհրդական-
ները թէ՝ ինչ պիտի անեմ: Նրանք պատասխա-
նեցին՝ արա այն, ինչ որ թագուհին ասում է:

Կառապանը հրամայեց իւր ծառաներին
կառքը լծել: Գամայեանթին սեղմեց մանուկ-
ներին իւր կրծքին և արտասուաթոր ասաց.
«Ալրուն զաւակներս, լիշեցէք միշտ աստուած-
ներին ու պահեցէք նրանց պատուիրանք-
ները»: Կառապանն առաւ լաց լինող մա-
նուկներին, դրեց կառքի մէջ և առաջ քշեց
շտապով:

Գամայնանթին, ձեռներն իրարու կցած, աստուածներից երկար կեանք ու առողջութիւն մաղթեց լւը գաւակների համար:

7. Ք Ա Ի Է Ն Ե Ր Ը

Կոր էր կառապան Վարշնէան երեխաների հետ միասին անհետացել մօտիկ սարերի այն կողմը, որ ահա Նալը վերջին անգամ քուէն զրոբեց և կորցրեց իւր ամբողջ տէրութիւնը: Փուշքարան ծիծաղելով ասաց. «Եթէ այժմ խաղալու ցանկութիւն ունենաս, տեսնեմ ինչ պիտի դրաւ զնես: Քո բոլոր ինչքո ու կալուածքը իմն են, մնում է քեզ միմիայն Գամայնանթին. Ել այժմ Գամայնանթու համար խաղանք»:

Այդ խօսքը կայծակի ոկտ հարուածեց թշուառ մարդուն: Սարսափից ապաշ կտրած մնաց նա մի փոքր միջոց. Նրան թւում էր թէ իւր սիրտը պիտի պատռուի: Յետոյ տուաւ իւր եղբօրը իւր վրայի բոլոր զարդարանքը, հաղաւ մի հասարակ շոր ու, գարդից խելաղարուած, թողեց, հեռացաւ իւր պալատից: Ոչ ոք նրան չետևեց՝ բացի Գամայնանթուց, որ նոյնպէս մի հասարակ շոր ունէր հաղած: Երկուսն էլ զիշերը բաց օդի մէջ անց կացըին:

Հետևեալ օրը Փուշքարան հրամայեց ձախն տու քաղաքի վաղոցներում թէ՛ ով որ նալ թաղաւորին լւը տունն ընդունի, կամ նրան կերակրի, պիտի մեւնի: Ոչ ոք չհամարձակուեցաւ նոր թաղաւորի հրամանին հակառակել, և այդ պատճառով Նալը և Գամայնանթին երեք օր շարունակ շրջում էին քաղցած, ծարաւ: Յետոյ զանագան բանջարեղին ու ելագ ժողովելով թողին ու հեռացան քաղաքի մօտակալքից: Ճատ օրեր իրենց խեղճութիւնը համբերութեամբ տանելուց յետոյ, մի օր յանկարծ Նալը նկատեց լւը առջեւը զետնի վրայ երկու հատ ուկնիալլ թռչուններ, որնք կարծես քնած էին: Երանի թէ կարողանալի սրանց որսալ, մտածեց նու: Խսկոյն հանեց իւր վերարկուն, բարձրացրեց և ճարպիկ ձեռքով կարողացաւ թռչուններին նրա տակն անել: Հենց որ ինքը մօտ վազեց, թռչունները նրա զարմացած աչքերի տռած վեր թռան, վերարկուն հետները վախցին ու վերելց կանչեցին՝ մենք այն քուէններն ենք, այլ լիմար, որոնք չհանդըստացան, մինչեւ որ գու քո վերջին շորդ էլ կորցրիր: Այս առելով թռան, գնացին նրանք, վերարկուն էլ հետները տարան և անհետացան զիմացի ծառերի ետևում:

Ալժմ Նալը դարձաւ դէպի իւր ամուսինը և ասաց. «Տես, Դամայեանթի, նրանք, որ իմ թագաւորութիւնը խլեցին և բանն այնտեղ հասցրին, որ ոչ ոք մեզ տուն ու կերակուր ըրտալ, — նրանք, այդ չար ողիները, յափշտակեցին ինձնից և իմ վերջին իրը: Լսիր իմ խօսքս, ով ազնիւ կին, որ իմ թշուառութեանը ընկերացար: Ահա տեսնում ես այստեղ շատ ճանապարհներ են բաժանւում: Ահա, այս ճանապարհը տանում է դէպի տուրը ճղնաւորները, իսկ միւսը, աջ կողմինը տանում է դէպի քո հայրենիքը: Այստեղ դու ապրում էիր մի ժամանակ երջանիկ. այժմ էլ քո ծնողները քեզ սիրով կընդունեն, եթէ վերադառնաս այնտեղ: Եկ բաժանուենք այստեղ, որ հենց այստեղ էլ վերջանայ այն չարչարանքը, որ դու իմ պատճառով քաշում ես»:

Դամայեանթին սիրտնեց ու աչքերն արտասուքով լիքը պատասխանեց.

— Սիրելի Նալ, ասես թէ սիրտս կտոր կտոր է լինում, ձեռք ու ոտքս թուլանում են, երբ մտածում եմ ասածիդ վրայ: Գու ուզում ես կնօքդ դէն ձգել: Գու ամեն բան կորցրիր, ամեն տեսակ վիշտ ու հոգ տանջում է քեզ, և ես, քեզ ալդպէս թշուառ տեսնելով, պիտի հեռանամ

քեզնից: Ա՛յս, դու զգիտես դեռ, խեղճ մարդ, որ թշուառութեան ու կարօտութեան մէջ ոչ ոք չէ կարող մարդու սիրոն այնպէս մխիթարել ինչպէս կինը:

— Ա՛յս, ես լաւ զիտեմ այդ, ով բարի, անարատ կին, պատասխանեց Նալը. Ես խօ չեմ ուզում քեզ թողնել: Ես պահանջում եմ միայն, որ դու գնաս այնտեղ, ուր աւելի լաւ կ'ապրես, քան ինձ հետ: Ա՛յս, աւելի շուտ կեանքիցո կը բաժանուեմ, քան քեզնից:

Դամայեանթին ասաց.

— Եթէ դու, իմ թանգաղին ամուսինս, չես ցանկանում ինձ հեռացնել, ինչու ուրեմն ցոյց տուիր ինձ իմ հալրենիքի ճանապարհը: — Յետոյ, փաթաթուելով նրան, արտասուելով գոյեց. «Մի թողնիր ինձ, աչքիս լոյս, մի հեռացրու քեզնից նրան, որ քեզ իւր գլխից աւելի է սիրում: Հաւատա, դու ինքդ քեզ կ'ատես, եթէ ինձնից բաժանուես: Եթէ ես քո ամեն ուրախութեանդ ընկեր եմ եղել, ուզում եմ քո նեղութիւնիցն էլ իմ մասն ունենալ: Բայց եթէ դու ինձ իմ հալրենիքն ես ուզարկում, ուրեմն գու էլ ինձ ընկերացիր ու միասին դնանք այնտեղ: Ալրով կընդունի քեզ իմ հալրը. նա քո բարեկամն ու ազատարարը կը լինի:

— Զեմ կառկածում, ով աննման, որ քո
հայրը իւր իշխանութիւնից ինձ բաժին կը տալ,
տաց նալը: Այնու ամենալիւ ես, որ ամեն բան
կորցրած, քամբազդացած մի մարդ եմ, չեմ
համարձակուում գնալ նրա մօտ: Մտածիր:
թէ ինչպէս եկալ ես վեսարքնտրութեան հան-
դիսին, և այժմ ինչպէս պիտի երեամ նրա-
աշքին, աւելի յօժար եմ թշուառութեանս մէջ
մեռնել: Գնանք ուրեմն, շրջենք սար ու ձոր
և աստուածների տուածից ինչ որ դանենք՝ այն
ուտենք:

Անմեղ, առաքինի Պամայեանթին իւր հան-
դերձի կիսով ծածկեց ամուսնուն, և երկու-
որ միասին միւնոյն հանդերձի տակ առաջ
դնացին:

8. ԱՆՏԵՐԻ ԽՐԱՒԹԸ

Երբ մոթը վրալ հասու, նրանք գտան
մի դատարկ խրճիթ, որի մէջ լոգնած պառկե-
ցին և խկոյն քնեցին: Բայց նալը շուտով
զարթնեց: Նա մտարերեց իւր թշուառ վի-
ճակը, մտածեց, որ ինքն եղաւ իւր իշխա-
նութիւնը կորցնելու և իւր բարեկամներից բա-
ժանուելու պատճառը, և թէ իւր ամուսինը

միմիայն իւր պատճառով է թշուառութեան
մատնուած: Նրա միտքը պղտորուեցաւ, և նա
լաւ համարեց յօժարակամ մեռնել, քան
թէ աղդպէս ապրել: Գառնութեամբ լցուած
նայեց ամուսնու վրալ: Քանի որ դու, խեղճ
կին, ինձ պէս մեզապարտի մօտ լինիս, ասաց
նա իւր մտքում, դժբազդութիւնից ազատ
չես մնալ. ինձնից բաժանուած դու կարող ես
գեռ ևս երջանիկ լինել:

Որքան մտածում էր նա, այնքան աւելի
սաստիկ եռում էր նրա մէջ իւր կնոջը թողնելու
միտքը: Նա, այդ սքանչելի, աննման կինը —
ասում էր նալն ինքն իրեն — անվտանգ կ'անցնի,
կ'երթալ. ոչ մի կոպիտ ձեռք չփ համարձակուիլ
նրան դիպչել: Աշխարհիս վրայ ամեն տեղ նա
աւելի բազդաւոր կը լինի քան թէ ինձ հետ:

Այդ բոլորը իւր մտքի մէջ ծանը ու թե-
թեւ անելով, նալը վեր կացաւ: Բայց նա նոր
նկատեց, որ ինքը շոր չունի, և լճուեց իւր
կնոջ հանդերձի կէսը կտրել: Բայց բնպէս կա-
րող էր հանդերձը բաժանել առանց ամուս-
նուն զարթեցնելու: Խրճիթի մէջ չորս կողմը
պտտելով դտաւ մի հատ ժանգոտած սուր: Պուրն
առաւ, կտրեց հանդերձի կէսը, նեղ ու
կարճուկ վաթաթեց վրան և, որտի ցաւից լինել

քը կորցրած, դուրս վաղեց: Բայց նորից վերտագարձաւ և, ձեռները միոնեանց խառնելով, ոկտեց լաց լինելով ասել. «Այս քնքով ճաղիկը, որ այնպէս է մեծացել, որ ոչ արեւի շող է տեսել, ոչ սառը քամի, հիմա պառկած է տիտեղ չոր գետնի վրայ, իւր հանդերձի կիսիցն ու իւր ամուսնոց զբկուած: Ո՛հ, ի՞նչ պիտի զգայ նա, երբ զարթնի ու ինքն իրեն մենակ տեսնի, կամ երբ սկսի թափառել անտառի մէջ, որ այնքան կատաղի զազաններ են բնակւում: Բայց բարի աստուածները, որոնք իշխում են ամեն տեղ, օդի մէջ թէ երկրի վրայ, սարերի ծալրում թէ անդունդների խորքում, նրանք կը պահպանեն այս անմեղին, որ անվնաս հասնի մարդաբնակ տեղեր»:

Այդպէս, Քալիկց մոլորուած, կրկին թողեց իւր ամուսնուն: Բայց էլի քանի քանի անզամ լիտ եկաւ: Վերջապէս խելքը կորցրած վաղեց դէսլի անտառի խորքը, մինչև որ ուշաթափ վայր ընկաւ:

9. Օ 2 Ը

Հուսաղէմին դարթնեց Դամայեանթին:
Գիս նալեց, դէն նալեց — ամուսնուն ըլ-

դտաւ: Կանչեց նրա անունը — պատասխան չեկաւ: Ակրտը գող վեր կացաւ, և աչա տեսաւ, որ իւր հանդերձի կէսը չկայ: Այն միաքը թէ՝ իւր մարդն իրեն թողել է, այնպէս ցնցոց նըրան, որ նա մի քանի րոպէ գունաթափ ու ապշած մնաց, կարծես տեղն ու տեղը քար կը տրուեց: Բայց նորից յոյսը մտաւ նրա սիրտը և կարծես ներսից ասաց նրան՝ նա այստեղ է, մօտիկ է, դու նրան նորից կը տեսնես: Այս ու այն կողմը վազվազելով, սկսեց աղիողորմ ձայնով կանչել. «Ո՛վ իմ տէր, իմ թաղաւոր, մաք ես: Այս, ես կը մեանե ի, եթէ դու ինձ թաղնես, կամ ինձ խաբես: Այսեկան, եթէ այստեղ ես, անտառումն ես և լսում ես իմ ազաքանքը, զթա ինձ ու յետ գարձիր: Մի ժէ կարող ես մոռանալ մեր նշանդրէքի օրն արած խոստմունքդ: Զէ որ յափտենական աստուածները, որոնցից զաղտնի չէ մնում մեր ոչ մի արարմունքը, լսեցին երգումդ: Ամուսինս, սիրելիս, եթէ որ և իցէ չար գեղ քեզ փորձանքի մէջ է ձգել, մի թողնիլ, որ ես, անմեղս, գրահամար տանջուեմ: Այս, անկարելի է, որ հաստատ վճռած լինիս երեսդ ինձնից գարձնել: Երեխ, այստեղից հեռու չես, թաք ես կացել, ինձ հետ հանաք ես անում: Գնուրս եկ, սիրե-

լիս: Այս ինձ, եթէ չար դեք քեզ մոլորեցրել է, որ անմեղ կնոջդ խարես: Եթէ ալդպէս է, որչափ պիտի խղճամք քեզ: Ի՞նչ պիտի անես նեղութեան մէջ առանց ամուսնուդ անձնուէր խնամքին և ինչպէս պիտի զարհուրես, եթը նորից ուշքի գատ»:

Այսպէս մղիտարով թափառում էր ինեղճ կինն անտառի խորքերում: Չատ անդամ ուշշափ վայր էր ընկնում: Ուշքի եկածին ոլէս նորից սկսում էր լաց լինել ու կանչել իւր ամուսնուն: Յանկարծ անտառի մութը խորշերից նետի պէս գուրս սօղաց մի օձ, որ խոկոյն վաթաթուելով Գամալեանթուն, սեղմեց նրան մի ծառի:

— Նալ, սիրելիս, աղատիր ինձ, աղատիր կնոջդ, կանչեց նա, մի թողնիլ, որ ես մեռնեմ, եթէ ոչ դու քո ամենանձնուէր բարեկամդ կը կորցնես:

Մի քաջ որսորդ, որ հենց այդ միջոցին շրջում էր անտառում, լսեց այդ աղաղակը: Մօտ վաղեց և հենց տեսաւ թէ չէ, խոկոյն հանեց կապարճից մի նետ, արձակեց դէպէ օձը: Նետն օձի աչքի միջով մասաւ ու զլիսի մէջտեղում ցցուեցաւ, և օձն խոկոյն սոստկեց: Գամալեանթին վեր կացաւ ու խորին շնորհա-

կալութիւն բայտնեց որսորդին իւր կեանքը փրկելու համար: Որսորդը՝ նրա զեղեցիութիւնը տեսնելով, մտքումը դրեց նրան իրեն կին առնել և ասաց. «Ով հրաշալի սիրուն աղջիկ, եկ գնանք ինձ հետ իմ տունը, և դու իմ տան տիրուհին դարձիր»:

— Ի՞նչ ես խօսում, ինչպէս կարելի է, ես պահկուած եմ, ասաց Գամալեանթին: Ես իմ ամուսինն ունիմ, ուրիշ ոչ ոքի չեմ ոզում ձանաչել: Իմ կեանքն ազատելուդ համար ես կը մաղթեմ աստուածներին, որ նրանք քեզ օրհնեն:

Այս ասելով Գամալեանթին երեսը դարձրեց ու հեռացաւ: Խոկ որսորդը, այդ սիրուն կնոջը ձեռք բերելու փափաղով լցուած, կանչեց.

— Եթէ դու քո յօժար կամ քոյլ չգաս, ես քեզ զօրով իմ տունը կը տանեմ: Ասաց ու վագեց փախստականի վրայ: Գամալեանթին, տեսնելով նրա յարձակումը, ծունկ չոքեց, ձեռները բարձրացրեց ու սկսեց բարձրաձալն աղօթք անել աստուածներին:

Յանկարծ որսորդին, կարծես, կայծակը խրվեց. մեռածի պէս զետին զորուեց նա, և Գամալեանթին փախաւ. անտառի խորին:

10. ՎԱԳԻՔԸ

Ճատ օր ու զիշեր թափառեց Գամայնեանթին ահաւոր անտառի մէջ: Վերջապէս հասաւ մի սարի ստորոտ, որի գաղաթը մինչև ամպերն էր հասնում: Մի քարի վրայ նըստելով և սարին նայելով, ասաց նա իւր սրտի խորքում. «Ո՞վ դու սարերի թագաւոր, ողջունում եմ քեզ ես, ինքո թագաւորի աղջկ, մեծաշուք թագաւորի կնիկ: Իմացիր, որ ես Գամայնեանթին եմ, իմ մարդուս անունն է Նալ: Քո այդ երկնքին հասնող գաղաթիցդ կարող ես չորս կողմդ նայել: Ի սէր Աստուծոյ, ասա, չըտեսար դու իմ ամուսնուն: Ա՛խ, երանի թէ կարողանայի քո գաղաթը բարձրանալ, այնտեղից ես նրան կը տեսնէի, որքան էլ հեռու լինէր նա: Բայց դու տեսել ես նրան, գիտես նիս գնացած ճանապարհը, զիտես այն քարանձաւը, ուր նա թաքնուած է: Խղճան ինձ, ասա, որտեղ կարող եմ դտնել նրան, այդ պատուական տղամարդին, որին չար գելը մոլորեցրել է»:

Ոչ մի պատասխան չառաւ ողորմելի կինը: Նա թաց աչքերով նայում էր սարին, որի գաղաթը արևի ոսկեփալլ լուսով պայծառա-

ցաւ: Յանկարծ նա ինքն իրեն մի կողմ նայեց, և ինչ տեսնէ՝ մի ահաղին վագր առաջ է սողում թփերի միջից: Մի վայրկեան կանգ առաւ այդ հրէշը, նայեց Գամայնեանթու վրայ, և նրա արիւնախանձ աչքերը ոկուցին կայծակին տալ:

Գամայնեանթին ծունկ չոքեց, կարկառեց բագուկները դէպի վագրը և կանչեց. «Սարի սիրուն անզգայ քար է, գուցէ քո սրտի մէջ գութի լինի, ով անտառի իշխան: Տես, ես Գամայնեանթին եմ, իմ ամուսնուս եմ փնտռաւմ: Եթէ դու նրան տեսել ես, ասա ինձ, որտեղ է նա, որ վագեմ, գտնեմ: Իսկ եթէ գու էլ գութ չունիս, եկ, սպանիր ինձ ու միքջ գիր իմ տանջանքին: Այս արիւնածարաւ վագր, խղճան ինձ»: Վաղըն անյալտացաւ. Գամայնեանթին դարձեալ մենակ մնաց:

11. ԹԱՐԱՍՍԱՆ

Գամայնեանթին շարունակեց գնալ: Ճատ տեղ անտառն այնպէս խիտ էր, որ նա մեծ դժուարութեամբ էր առաջ գնում: Երբարդ օրը ծառերի միջավ նշմարեց մի տափարակ տեղ. ներս մտաւ և փոքր ինչ հեռաւում նկատեց մի

ծառաստան: Մօտ գնալով տեսաւ, որ այնտեղ փառահեղ ծառեր են անկուած: Նրանցից շատերը ծաղկած էին, միւսները պտուղներով բեռնաւորուած: Ճիւղերի միջից լուսւմ էին թռչունների երգեր: Մտաւ ծառաստանը և տեսաւ, հովու զավ ծառուղիներ: Այստեղ մի պարզ առուակի մօտ արածում էին այծեամներ, այնտեղ ծաղկափթիթ սաղարթով պասկուած ծառերի տակ զխտարները բարձրացնում էին իրենց զլուխը և ոլրուն աչքերով նայում էին եկուորին: Ի վերջոյ տեսաւ նա ամեն կողմից դէպի ինքն եկող բարեպաշտ ճղնաւորներ: Ամենախոնարհ կերպով զլուխը թեքներով ծերունիների առաջ, առաց՝ ողջոյն ձեզ:

— Ողջոյն և քեզ, պատասխանեցին ծերունիները, — առաջ մեզ, ով եռ գու և ինչ ես ցանկանում: Քեզ նայելիս մենք հիանում ենք: Ասա տեսնենք, արդեօք գու այս անտառի աստուածուհին չես, որին մենք պաշտում ենք, կամ զուցէ գու այն դաշտերի դիցուհին ես, զուցէ մեր ծառաստանի աղբիւրի յաւերժահամբան եօ:

— Ոչ աստուածուհի և ոչ յաւերժահամբան, այլ լոկ մի մահկանացու կին է կանգնած ձեր առաջ, պատասխանեց Քամայեանթին: Կոեցէք,

ով շնորհատուներ, իմ զլուխ անցքը: Իմ հայրն է Բիման, Վիդարբալի իշխանը: Նալը՝ Նիշագալի թագաւորը, իմաստուն, անյաղթելի հերսոր՝ իմ ամուսինն է: Գուք նրան ինձ մօտ չէք տեսնում ու զարմանում էք: Բայց պիտի իմանաք, որ չար զեւ խլեց նրան ինձնից, և ես նրան պտրելով շրջում եմ դաշտ ու անտառ, սար ու ձոր: Եթէ զիտէք՝ ուր է նա, ո՞հ, օդնեցէք ինձ, որ ես նրան զտնեմ: Ճգնաւորները մխիթարեցին լացող կնոջը և ասացին.

— Յիշիր մեր խօսքը, դու Նալին դարձեալ կը տեսնես: Այս խօսքերն ասացին թէ չէ, խոկոյն աներեւթացան նրանք, ու ծառաստանն էլ նրանց հետ: Դամայեանթին փոքր միջոց մնաց բոլորավին ապշած, յետոյ թեթև սրտով հեռացաւ այնտեղից:

12. Կ Ս Ր Ա Կ Ա Ն

Դամայեանթին, շարունակելով թափառել անտառի մէջ, զտաւ այն ծառը, որ աստուածների լեզուով կուռում է Աշուա, իսկ մարդիկ նրան ասում են Աշուա: Բարձր կանգնած էր նրա կատարը, և նրա վայր կախուած ճիւղերը

զարդարուած էին անուշահոտ ծաղիկներով։
Գամայնեանթին՝ բաղուկները տարածելով գեալի
ծառը, բացագանցեց. «Ով առհագ, արա ինձ առհագ։
Տես, ես Գամայնեանթին եմ, այն սիրտը մա-
շտած կինը, որին թողել է իւր ամուսինը։
Չար գեւերից մէկը մալպիցըել է իմ սիրելի, թան-
դազին Նալին աւ փախցրել է նրան։ Եթէ գու
նրան տեսել ես, ասա ինձ, ուր դնամ, որ
նրան զանեմ։ Ով անհոգ, եթէ իմ մարդուն
գտնես, դու ինձ իմ հոգսերից ադասողը կը
լինի»։

Յետոյ պտտելով ծառի շուրջը, ծաղիկներ
ու տերևներ քաղեց, զարդարեց իւր խօսլովիքը
և հեռանալով ասաց.

— Գլխիս ծաղիկների հետ միասին ես տա-
նամ եմ այստեղից ամեն վիշտ, հոգս ու նե-
ղութիւն։ Ուրեմն գու, ով ծառ, մնում ես հոգ-
սից ազատ։ Եթէ Նալը, իմ թաղաւորը, այս-
տեղ դայ, ասա նրան՝ քո կինը ամեն ցաւ ու
դարդ այստեղից հետն առաւ, տարաւ։ Այնու-
հետեւ թող նա անվիշտ ու անհոգ հանգստա-
նայ քո շուշաքի տակ։

Աւելի ու աւելի խորամտւս եղաւ Գամա-
յեանթին թանձր անտառի մէջ, և զարձեալ
շատ օրեր անցան։ Յանկարծ նրա ականջին

Հասան մարդկալին ձայներ ու ձիերի խրխնջոյ։
Սիր ձայների ուղղութեամբ առաջ գնալով, ան-
տառի մէջ, մի բաց տեղում մի քարուան տե-
սաւ, որ զետի ափը բռնած զնում էր։ Մեծ
էր մարդկանց բազմութիւնը, բայց տւելի մեծ
էր ամեն տեսակ ապրանքներով բեւնած ձիերի
ու փղերի թիւը։ Իւր տարօրինակ հազարութիւն
մազերը կրծքի վրայ շաղ ընկած, մարմինը հան-
գերձի կիսով փաթաթած, վագէվագ գուրս եկաւ
Գամայնեանթին անտառից։ Այն ինչ տպաւորու-
թիւն էր, որ նա արաւ քարուանի մարդկանց
վրայ։ Ոմանք փախան, միւսները երկիւղից տեղն
ու տեղը անշարժ մնացին, շատերը ծիծաղցին
նորեկի վրայ։ Բայց շատերն էլ կէս ցաւակցո-
րէն, կէս պատկառանքով ու տարտափով լցուած
էին նայում այդ ծաղիկներով ու տերևներով
զարդարուած աղջկայ վրայ։

Վերջապէս մի ծեր մարդ մօտեցաւ նրան
ու ասաց. «Ով ես գու, ով դիցուհի, արդեօք
սարի լեռնահարսն ես, թէ զետի յաւերժահար-
սը։ Կամ գոնէ առա, ինչ անուն տանք քեզ։
Մի զար մեզ ոչնչացնելու, այլ թող քո ոտքը
մեզ համար ըարի լինի։ Յոյներս քեզ վրայ
էնք դնում, որ օրհնութիւնը մեզնից անպա-
կաս լինի»։

Մինչ ծերունին այս խօսքերն էր ասում, ամեն կողմից մօտ վաղեցին մարդիկ: Ալժմ խօսեց Գամայնեանթին.

—Ես անմահներից չեմ, այ մարդիկ, ոչ լեռնահարսն եմ և ոչ ջրերի յաւերժահարսն, այ մի մահկանացու կին եմ, թաղաւորի աղջկի, Գամայնեանթի անունով, որ իւր անուննուն, սքանչելի նալ թաղաւորին է փնտում: Եթէ նրան այս անտառում տեսել էք, ասացէք ինձ, ուր է, ո՞րտեղ գտնեմ նրան: Գամայնեանթու այս խօսքերին պատառխանեց ծերունին.

—Ամեն տեսակ կատաղի գաղաճներ, առիւծներ, վայրի զոմէշներ, վաղբեր, եղնիկներ, արջեր տեսայ ես այս անտառում, բայց ոչ մի մարդկալին էակ չտեսայ, բացի քիղնից, ով պատուական կին:

Գամայնեանթին, դառնալով դէպի կարաւանի առաջնորդը, հարցրեց.

—Այս կարաւանն ուր է զնում:

Առաջնորդը պատասխանեց՝

—Մենք դնում ենք Զեղի քաղաքը, որտեղ իշխում է Սովահու թաղաւորը: Նրա մալին ամեն տեղ զոված է իրեւ կանանց միջի ակն ու մարդարիտը:

Ալդ համբաւից ուրախացած, Գամայնեանթին էլ քարուանի հետ միասին ճանապարհ ընկաւ:

13. ՎԱՅՐԵՆԻ ՓՂԵՐԸ

Մի երեկոյ քարուանը հասաւ անտառի մէջ մի գեղեցիկ լճի ափ: Ալդտեղ ձիերին ու փղերին ջուր տուին և վճռեցին մինչև միւս առաւտ հանգստանալ: Գրաստներին խօս ու գարի տուին և փայտ ժողովեցին, կրակ վառեցին ու իրենց համար կերակուր պատրաստեցին: Կէս զիշերուայ դէմ, երբ կրակնելն արդէն մարած էին, և մարդկանց մեծ մասը խոր քնով քնած էր, մի մեծ խումբ վալիենի փղեր մօտեցան լճին, որ նրա քաղցր ջրից խմեն, ինչպէս ստվոր էին ամեն զիշեր: Հենց որ լճին մօտեցան և իրենց ընտանի ցեղակիցների հոտն առան, սարերից զահավիժուող ժայռերի նման, կտորազարար վրայ տուին: Մարսափելի ճալթիւն ու աղմուկ բարձրացաւ: Ֆայռեր կոտրատուեցան, վրաններ խորտակուեցան, մարդիկ ու ձիեր ստքի տակ տրորուեցան, և ընտանի փղերից շատերն անսպասելի յարձակումից սոսկալի կերպով կոտորուեցան: Մարդիկ ստրափահար սկսեցին դէս ու

դէն փախչել, ալստեղ ազատուողն այնտեղ էր
մահ գտնում, որովհետեւ ամեն կողմից փղերի
նոր նոր խմբեր էին յարձակւում:

Այդ աղմկի թռւնդ միջոցին զարթնեց Դա-
մալեանթին: Վախեցած վեր թռաւ և լուսնի
պայծառ լուսով տեսաւ չորս կողմի իրարան-
ցումն ու մարդկանց փախուստը: Իրենից մի
փոքր հեռու ընկած էր մի փիղ, որ՝ փորը պա-
տռուած, հողեւարքի մէջ, աղիողորմ մռնջիւնով
կնճիթը վեր ու վար էր անում: Նրա կողքին
փռուած էին կոխկռտուած ապրանքի հակեր,
որոնց զոյնզգոյն փաթեթները պատռուուած
էին: Դառաներից մինը, վագէվազ տռաջ գա-
լով, տեսաւ այդ ապրանքն ու կանգ առաւ:
Ուրիշ ծառաներ վաղելով անցնում էին: Է՛տ,
կանչեց նա, եկէք, ալստեղ մարդարիտներ ու
գոհարներ կան: Բաղդը ինքն է իւր ոտ-
քով մեղ եկել, առնենք, փախչենք ու մենք
ինքներս տէր լինինք, ով հասնի իրաւունք
ունի վեր առնելու: Դառաներն իսկոյն վրայ
տուին և ագահաբար սկսեցին գետնին փրո-
ւած դանձերը ժողովել: Բայց դեռ չէին վեր-
ջացրել, որ ահա ամեն կողմից փղերը յարձա-
կուեցան նրանց վրայ: Ոչ ոք չը կարողացաւ իւր
կեանքն աղատել: Մի քանիսը կոտորուեցան,

միւսներն օդի մէջ թռան ու յետոյ վալը ընկ-
նելով ոտնակոխ եղան: Դամալեանթին, կարծես,
մի հրաշքով ազատուեցաւ մահից:

Վերջապէս, ամեն բան ջարդ ու փշուր
անելուց յետոյ, վալընի փղերը հեռացան նոյն-
ակս արագ, ինչպէս եկել էին: Հետզհետէ ժո-
ղովուեցան կենդանի մնացողները, մարդ ու
անասուն: Դամալեանթին էլ մօտեցաւ: Մար-
դիկ միմեանց ասում էին. «Տէ՛ր Աստուած, մեր
որ մեղքի համար այդ պատուհասը կրեցինք:
Կալին արդեօք մեր մէջ չար խղճի տէր մար-
դիկ, որոնք երկրի աստուծուն, ինչպէս հարկն
է, զերմեռանգութեամբ, զոհաբերաթեամբ ու
աղօթքով չէին ծառայել: Կամ զուցէ երկնքի
աստղերը թշնամացան մեզ հետ»:

Ուրիշներն ասում էին. «Մեր թշուառու-
թեան պատճառը դրանք չէին: Պատճառը
միմիայն այն կինն է, այն ցնորուածը, որ մեզ
ընկերացաւ: Անկասկած նա այն մահաբեր ոգի-
ներիցն է, որոնք միշտ թշնամի են բաղդաւոր
մարդկանց: Եկէք հենց որ նրան տեսնենք թէ
չէ, նիզակներով, քարերով, ըրերով ու սրերով
վրան վաղենք ու սպանենք»:

Դամալեանթու ջանը դող ընկաւ, երբ որ
այդ լսեց. նա իսկոյն փախաւ անտառը: Ակսեց

Հեռուից հետևել քարուանին, ինչպէս որ սպալ-
ծառ լուսնեակը գնում է ու ամպերի ետեից:
Նրանք սուդ էին անում իրենց սպանուած հայ-
րերի, որդիների, եղբայրների ու բարեկամների
համար, իսկ Գամայեանթին լաց էր լինում իւր
կոկծից: Վերջապէս քարուանը, նրա հետ և
Գամայեանթին, հասան Զեղի քաղաքը:

14. ԶԵՂԻ ՔԱՂԱՔՈՒՄ

Երբ Գամայեանթին քաղաքը մտաւ, ամեն
կողմից մարդիկ հաւաքուեցան նրա շուրջը ու
սկսեցին զարմացմամբ վրան նայել: Ոմանք կար-
ծում էին կախարդ է, միւսները խենթի տեղ
էին դնում, երեխայքը ետելից զուռում էին:
Այդ կերպով հասաւ նա թագաւորի մօր պալա-
տը հենց այս միջոցին, երբ նա պատուհանից
ցած, դէպի վողոցն էր նայում: Երբ նա նկա-
տեց հետզհետէ շատացող ամբոխով շրջապա-
տուած Գամայեանթուն, ասաց. «Ո՛հ, այս ի՞նչ
աստուածանման կին է, և ի՞նչ ողորմելի աղ-
քատութեան մէջ: Ա՛խ, գնացէք շուտով բե-
րէք նրան ինձ մօտ»:

Խսկոյն վազեցին, Գամայեանթուն բերեցին
թագուհու առաջ, և թագուհին խօսեց.

— Ասա ինձ, ով աղնիւ կին, ի՞նչ է անու-
նըդ, և որտեղից ես գալիս:

Գամայեանթին պատասխանեց.

— Իմացած լինիս, վսեմափայլ թաղուհի, որ
ես տեսակ տեսակ ձեռարուեստների մէջ շատ
վարժուած եմ և որ և իցէ սողնուական տան
մէջ ծառայութիւն եմ վնտում: Երկար ժա-
մանակ այս ու այն կողմը ման եկայ, բոյսերով
ու պտուղներով կերակրուեցայ, որտեղ գիշերն
ինձ վրայ էր հասնում, այնտեղ քնում էի: Ես
իմ ամուսնուն էի որոնում, որի գլուխը մի սար-
սափելի փորձանք է եկել: Ամեն բան կորցրեց նա
խաղի մէջ ու փախաւ: Ես նրանից չբաժանուեցայ:
Վերջը նա իւր յետին շապիկն անգամ կորցրեց:
Քամբազդութիւնը զալիս՝ մենակ չի գալիս: Նա
չէր ուզում ինձ էլ իւր հետ միասին թշուառու-
թեան մէջ զլորել, այդ պատճառով զիշերը,
իմ քնած ժամանակն առել է շապկիս կէսն ու
փախել: Ինչպէս այս շապկիս մի կէսը միւս կէսն
է պտրտում, այնպէս էլ ես իմ ամուսնուն եմ
պտրտում: Զապկիս կէսն է մնացել, կեանքիս
էլ կէսը:

Այսպէս խօսեց աղնիւ Գամայեանթին, ար-
տասուքն աչքերին, որից յետով թագուհին վրայ
բերաւ.

— Ավ շնորհալի կին, ես քեզ սըտանց սիրեցի, մնա՞ այստեղ, ինձ մօտ:

— Սիրով կը մնամ քեզ մօտ, թագուհի, պատասխանեց Դամայեանթին, եթէ դու իմ մի քանի առաջարկութիւններս ընդունես: Ես միմիայն քեզ կը ծառալիք և ոչ մի տղամարդի հետ չիմ խօսիլ այստեղ, բացի զուցէ այն քըրմից, որ ինձ իմ ամուսնուց լուր կը բերի:

— Ամեն բան թող եմ տալիս քեզ, ով անարատ հողի, պատասխանեց թագուհին և հրամայեց իւր աղջկանը՝ Սունանդալին ներս կանչել:

Խոկոյն եկաւ Սունանդան, իւր ընկերուհիների խմբով շրջապատած: Պայըն ասաց նրան.

— Նայի՞ր այս աղնի: կնոջը. քո տարիքի է, բայց արդէն որքան աշխարհային նեղութիւններ է կըել. յարդիր որան, սիրիր և սովորիր նրանից բարին ու իմաստունը:

Այսուհետև Դամայեանթին մնաց Սունանդալի մօտ, և թագուհին նրան այնպէս էր պահում, ինչպէս իւր հարազատ աղջկանը:

15. ՕԶԵՐԻ ԹԱԳԱՒՊՐ ՔԱՐՔՈՏԱԿԱՆ

Նալը իւր ամուսնուն թողնելուց յետոյ թափառում էր սիրտը կոտրած: Յերեկն արեւի տաք ճառագայթների տակ ալրաւելիս, անհամարձակ աչքերով նայում էր դէպի վեր ու ինքըն իրեն ասում. «Այս Ինդրան է, ամենատեսաստուածր, որ այդպէս խիստ է նայում ինձ կնոջո զէմ մեղանչելուս համար»: Նա դտաւ մի աղբիւր, կռացաւ նրա ափին, որ ջուր խմի: Ջրի մէջ տեսաւ իւր դէմքն ու նարսափից յետ ցատկեց: Ա՛խ, կանչեց նա, ով խեց ինձնից իմ պատկերը: Ոչ ոք չի կարող ինձ ճանաչել. ես ինքս անդամ ինձ չեմ ճանաչում: Այս ասելով շուռ եկաւ և, որքան ոտքեմում ոյժ կար, վազեց, փախաւ: Յանկարծ տեսաւ իւր առջեւը մի կրակէ տնտառ: Ամեն տեսակ ծառեր կրակից ձեւացած, կանդնած էին նրա դիմացը:

Երբ Նալը հիացած նայում էր այդ հրաշքին, կրակէ անտառի միջից այս խոռքերը լուսեցան.

— Նա՞լ, դու եկել ես, որ քո դարդն իմ դարդիս հետ խառնես: Եթէ ուզում ես ազատուել, ազատիր ինձ:

Նալը իսունց.

— Ո՞վ ես դու, ի՞նչ է խնդիրդ:

Զայնը շարունակեց.

— Եթէ քաջութիւն ունիս ինձ աղատելու,
ովրու արա, վազիր կրակի միջով դէպի ինձ:

Նալը պատասխանեց.

— Ես աշխարհում, քանի որ կնոջկցս բա-
ժանուած եմ, ոչնչից չեմ վախենում, բացի
ինձնից:

Կոսց ու թռառ կրակէ անտառի մէջ: Աչ-
ու ձախ անդադար կրակէ նոր նոր ծառեր ու
թփեր էին բունում երկրի նոր նոր բացուող
ճեղքուածներից. ամեն տեղ գետինը ծածկուած
էր անթիւ մանր վառ բոցերավ: Մի տեղ լըն-
կած էր կրակից կարմրած մի քար՝ վրան մի օձ:
Օձի բաց երախը բոցախառն ծուխ էր գուրս
փշում: Նրա զայնզգոյն կաշին կրակ էր կտրել:
Երբ Նալը մօտեցաւ, օձն իւր թաղաղարդ զը-
լուխը բարձրացրեց ու խռպոտ ձայնով ասաց.

— Նալ իշխան, տես, ես օձերի թաղաւոր
Քարկոտական եմ, որին հաղատակում են աշ-
խարհիս բոլոր օձերը: Իմացիր, որ ես Նարադա
բարեպատշտ ճգնաւորի անէ ծքովն եմ ալս զար-
հուրելի նզովքի մէջ ընկել: Ես ուզում էի նրան
խարել մի զործի մէջ, որ հիմա կը պատմեմ քեզ :

Մինչ այն դու պիտի դիմանաս ալդ մաքրիչ
կրակին, որ՝ քեզնից աւելի՝ քո ներսը բնա-
կուող Քալիին է տանջում:

16. ՀԵՏԱԲՐՅԻՌ ՓՈՔՐԻԿ ՕՉԸ

Օձերի թաղաւորն այսպէս սկսեց իւր պատ-
մութիւնն անել Նալ թաղաւորին, որ անվախ,
աներկիւղ կանգնած էր բոցերի մէջ և ուշա-
դրութեամբ լսում էր:

«Բարեպաշտ ճգնաւոր Նարադան մի պար-
տէզ էր տնկել, որի մէջ գտնւում էին հովա-
սուն քարայրեր և սառն աղբւարներ, ծառեր,
թփեր ու ծաղիկներ և ամեն տեսակ անվնաս
կենցանիներ: Այն բոլոր զագանները, որոնք ու-
րիշ արարածներին յափշտակելով են ապրում,
դուրս էին ձգուած այնտեղից: Այդպէս էլ օձե-
րի միջից նա այնպիսիներին էր ընդունել, որսնք
ցօղով ու ելագներով են կերակրում:

Խնչպէս եղաւ, մի օր ալդ փոքրիկ օձերից
մինը, հետաքրքրութիւնից շարժուած, վեր սո-
զաց մի ծառի վրայ ու սկսեց ուրախ ուրախ
մի ձիւղից միւսը ոյնուել: Այդտեղ տեսաւ նա
մի փոքրիկ, նախշունիկ թռչունի բոյն: Մեր օձու-
կը զլուխը բարձրացրեց ու նայեց բոյնի ներսը,

որտեղ մի կապտագոյն ձու կար դրուած։
Զուն ցողի կաթիլ կարծելով՝ ուզեց լիսել ու
կոտրեց բարակ կեղեւը։ Ոճուկը վախեցաւ և ու-
ղում էր փախչել։ Բայց այն թռչունը, որին
պատկանում էր բոյնը, վրայ հասաւ և այդ
բանը տեսաւ թէ չէ, իսկոյն սկսեց լացի ձայ-
նով կանչել։ Նա թռաւ, գնաց Նարագալի մօտ
իւր սրտի ցաւը պատմելու։

Նարագան իսկոյն վաղեց, որ օձին սպանի։
Բայց օձն արդէն դուրս էր փախել ու եկել էր
ինձ մօտ իւր գլուխն աղատելու։ Ճգնաւորն
եկաւ, պահանջեց ինձնից օձին։ Սլրով պատ-
րաստ էի տալ նրան, բայց չէի կարող։ Ես
ասացի՝ եթէ իմ հպատակներիցո մինը յան-
ցանք է գործել, ես ինքս կը պատժեմ նրան։
Նարագան պատասխանեց՝ լաւ, պատժիք ուրե-
մըն չարագործին։ Թո՞ղ նա վաղը, բոլոր աչ-
քածակ օձերի աչքը վախեցնելու համար, իմ
պարտիզի ցանկապատի ամենաբարձր ցցի ծայ-
րին կախուի։ Երեք օրից յետոյ նրան ցած կը
բերեն ու կրակը կը ձգեն։

Այս ասելով հեռացաւ արդարը. իսկ ես
սաստիկ տիրեցի, որ իմ օձուկին պիտի սպա-
նէի։ Նա շատ ճարպիկ ու խելացի էր և հրա-
մաններս կատարելու մէջ շատ վարպետ էր։

Երբ նա տիսուր աչքերով ինձ էր նայում,
յանկարծ մի լաւ միտք ծնուեցաւ իմ զլիիւ
մէջ։ Ես դարձայ, նրան ասացի՝ ճար չկալ,
գու պիտի կաշուիցդ գուրս գաս։ Ոճուկը չժո-
ղեց, որ ասածո կրկնեմ. մի ակնթարթում կա-
շուից գուրս եկաւ ու փախաւ։ Ես կանչեցի եր-
կու մեծ օձեր և ասացի նրանց՝ առէք այդ
կաշին ու տարէք, կախեցէք այնտեղ՝ ցանկա-
պատի ամենաբարձր ցցի ծայրին։ Օճերն ասու-
ցին միթէ ճգնաւորը չի նկատի, որ մեր կա-
խածն օձի շապիկ է։ Ես պատասխանեցի՝ նա
կը կարծի, թէ երեք օրուայ մէջ քամին ու
արեք օձուկի մարմինն այդպէս չորացրել են։
Ինչ որ ձեզ ասում եմ, այն արէք։ – Օճերն առան-
կաշին ու կախեցին։ Իսկ ես մտքումս ծիծա-
զում էի, որ կարողացայ ճղնաւորին խարել։ Այդ
այդպէս էլ կը լինէր, եթէ այն փաքրիկ թռչու-
նը, որի ձան կոտրուել էր, այնքան չա-
րաճճի չլինէր։ Նա կարծելով թէ օձին են կա-
խել, թռաւ, եկաւ, որ նրա աչքերը գուրս
փորէ։ Տեսաւ, որ կաշուի ներսը գտնարկ է,
իսկոյն հասկացաւ խարէտթիւնը։ Անմիջապէս
թռաւ, գնաց ճղնաւորի մօտ ու սկսեց երգել
Օձի թագաւորը քեզ յարեց,
Օձի տեղակ կաշին կախեց։

Այդ միջոցին ես հենց այստեղ, որտեղ ինձ
տեսնում ես պառկած, արևի տակ տաքսում
էի: Իմ պահապան օձերից, իժերից և ոչ մինն
այստեղ չէր, որ ինձ զգուշացնէր Նարադավից,
որ զարացած ինձ վրայ էր գալիս: Յանկարծ
ձախ տուաւ նա ինձ: Եւ ահա տեսայ ես նրան
բարկութիւնից կրակ դարձած աչքերով առաջս
կանդնած. նրա հայեացքի զօրութիւնը կա-
խարդեց ինձ այնպէս, որ ես չը կարսդացայ
շարժուել: Բայց ահա նա սկսեց խօսել. «Քա-
նի որ ալզպիսի խարեայութիւն ես արել,
դու պիտի պատժուես այն օձի վտարէն, որին
դու պատժից ազատեցիր: Մնա ուրեմն ալզպէս
անշարժ, ու թող կրակէ բոցերը քեզ տանջեն:
Կաշիդ կաշուի ետևից պիտի հանես, և ամեն
նոր կաշուիդ մէջ նոր կրակով ալբուես: Քո
տանջանքը միմիայն այն ժամանակ կը լիբջա-
նալ, երբ այնպիսի մի մարդ դայ այստեղ, որ
ինքն էլ, վշտերով խոցոտուած, իւր սեփական
կաշուից ուգենայ դուրս դալ և քաջութիւն
ունենայ, քո ձայնին լսելով, քեզ պատող բոցե-
րի ներսը թափանցել: Այս էլ կայ, որ նա՝ կրակի
մէջ կանգնած՝ այնքան պիտի զիմանայ,
մինչև որ դու նրան քո դիմի եկածը պատմես:
Այդ բոլորից յետով իսկոյն կը վերջանայ քո

տանջանքը, և նա, որի շնորհիւ դու պիտի
ազատուես, մի տարուց յիտոյ նոյնպէս կ'ազա-
տուի իւր թշուառութիւնից: Բայց որպէս զի
կարողանաս քո ազատչին կանչել, իմացիր որ
նա նաև թաղաւորն է»:

17. ԵՅԼԱՓՈԽԱՌԻԹԻՒՆ

Օձերի թագաւորը շարունակեց. «Այս ասե-
լով Նարադան հեռացաւ, իսկ ես մնացի տե-
զումս մեխուածձի պէս անշարժ: Իսկոյն և եթ
չորս կողմից գետնի տակից սկսեցին կրակի բո-
ցեր դուրս բռնկել ճարճատելով: Այդ բոցերը
գնալով աւելի ու աւելի սկսեցին աճել, և որը
թփի, որը ծառի կերպարանք առան: Ի՞նչ
պատմեմ քեզ իմ տանջանքը. դու ինքդ զդում
ես այդ, նաև թաղաւոր: Յաւից ես սաստիկ
կուչ եկայ, բայց տապն ինձ ձգձգեց: Դու դեռ
նոր մտար կրակի մէջ և արդէն սաստիկ ցաւ
ես զդում: Հիմա մտածիր թէ ես ինչ կրած
պիտի լինիմ, ես, որ, ահա տասնուչորս տարի
է, այս քարի վրայ ընկած եմ: Ժամանակը նրա-
նով չափեցի, որ ժամը մի անդամ քո անունն
էի կանչում: Ես ամեն ժամանակ զիտէի, թէ
քո զիսով ինչ է անցնում, որովհետեւ իմ հպա-

տակներն ամեն օր իրենցից մէկին ուղարկում
էին ինձ համար լուր բերելու, և լրաբերը կրա-
կի մէջ մեռնում էր: Տես, ահա այս կաշիները
բոլորը լրաբերներին են, որոնք սիրով դոհում
էին իրենց կեանքն իրենց թագաւորի համար:
Վերջապէս լսեցի, որ դու թափառում ես
անտառի մէջ: Այժմ դու ախտեղ ես. օրհ-
նուի քո գալիք այս բոցեղէն ծովի մէջ: Գնարս
խլիլ ինձ մատովդ»:

Նախ իւր աջ ձեռի ցուցամատը մեկնեց
օձերի թագաւորին, և նա խսկոյն վեր ցատկեց
և մատանու նման փաթաթուեցաւ նրա մա-
տին: Նալը՝ օձին առած՝ դուրս վազեց կրակէ
անտառի միջից, որ խսկոյն աներեւութացաւ
առանց մի հետք թողնելու:

Օձերի թագաւորը վայր սողաց դէպի գե-
տին, քանի գնաց՝ երկարացաւ, այնպէս որ նրա
զլուխն արդէն շատ հեռու էր, իսկ պոչը դեռ
փաթաթուած էր Նալի մատին: Վերջապէս
նա սմբողջապէս զետնի վրայ ձգուեցաւ եր-
կայն ու բարակ: Արի ետևիցս, կանչեց նա և
արագութեամբ առաջ շարժուեց դէպի այն աղ-
բիւրը, որի մէջ Նալը վտքը ինչ առաջ իւր
դէմքը տեսել էր: Մի ակնթարթում բոլոր ջու-
րը խմեց և ալնպէս մեծացաւ, որ Նալը եր-

բէք այնպիսի մեծ օձ չէր տեսած: Յետու, դառ-
նալով գէպի թագաւորը, ասաց. «Այժմ վերջին
մի բանն է մնացել, Կայ, Եկ ատամներս
համարիր, որ իմանամ թէ արդեօք նրանցից
ոչ մինը խօ չէ կոտրուել, կամ կորել, մինչ ես
կրակի մէջ սաստիկ ցաւից ծնօտներս անդա-
դար սեղմում էի»:

Նալը մօտեցաւ ու սկսեց համարել: Եօթ-
ներորդ ատամին հասնելուն պէս՝ Քարկոտական
ութերորդով կծեց նրա մատը ու գոչեց՝ նայիր
վզիս խեցեմորթին: Նալը նայեց փայլուն խե-
ցեմորթի մէջ, բայց հենց աչքն այնտեղ ձգեց
թէ չէ, տեսաւ, որ իւր դէմքը փոխուեցաւ. մի
քանի բոպէ բաւական եղաւ նրան մի բոլորովին
օտար, զբեթէ տղեղ մարդ դարձնելու համար:

Օձերի թագաւորն ասաց. «Ինչպէս զու
ցանկանում էիր, այնպէս էլ եղաւ: Այժմ ոչ ոք
քեզ չի ճանաչէլ. դու ինքդ քեզ օտար ես
թւում: Բայց չմոռանաս, որ աստուածներից
ստացած ձիրքերդ մնում են քեզ, ինչպէս և
կառք վարելու բնածին արհեստով: Այժմ զնա
չոխթուվիսն թագաւորի մօտ, որ համարելու
և քուէախաղի մէջ աշխարհիս բոլոր մարդ-
կանցից զերազանց է, և ասա՝ ես կառապան
վահուկան եմ: Եթէ նա քեզ հարցնի, թէ մի

օրում քանի մղոն կարող ես կառք քշել, ասու՝
հարիւր մղոն։ Նա քեզ կը վարձի, քեզնից
կառք վարելու և քշելու արհեստը սովորելու
համար։ Դու այդ արհեստը նրան այն ժամա-
նակ կը սովորեցնես, երբ դու նրանից համա-
րելու և քուէախաղի արհեստը սովորես։ Եթէ
այդ արհեստը դու վազ զիտենալիր, քո խորթ-
եղբայր Փուշքարան քեզնից քո թագաւորու-
թիւնը չէր կարող խլել։ Հռիթուփեռնի արհես-
տը սովորեցիր թէ չէ, քո վիշտն այնպէս կ'ան-
հետանայ, ինչպէս զիշերն արշալուսի առջև։
Եւ երբ դու ինոչդ ու մանուկներիդ զիրկդ առ-
նես, նալիր այս խեցեմորթին։

Այս ասելով՝ նա թագաւորին մի փայտն
խեցեմորթ տուաւ իւր պարանոցից ու աւելա-
ցրեց։ «Քանի որ այս խեցեմորթը կրծքիդ վրայ
կրես, քեզ ոչ մի օձ չի վնասիլ, և դու ամեն
չարից ու փորձանքից ազատ կը մնաս»։

Այս ասելուն պէս օձերի թագաւորն ան-
յալտացաւ։

18. Կ Ա Ր Ա Պ Ա Ն Ը

Նալը ճանապարհ ընկաւ դեպի Հռիթու-
փեռն թագաւորը, նրա մօտ կառապան

վարձուելու համար։ Տասներորդ օրը հասաւ
քաղաք, ներկայացաւ թագաւորին ու ասաց.
«Ես կառապան Վահուկան եմ, որ իւր արհես-
տի մէջ աշխարհումս նմանը չունի։ Հա-
րիւր մղոն կարող եմ ես մի օրում քշել։ Բացի
այդ, տեղեակ եմ նաև մի քանի արուեստների
ու զիտութիւնների։ Կերակուր եփելու մէջ
նոյնպէս քիչ կը պատահի, որ մէկն ինձ հա-
ւասար դայ։ Ուստի խնդրում եմ, թագաւոր,
ինձ քեզ մօտ կառապան ընդունիր»։

— Ես քեզ վարձում եմ ու տալիս եմ տա-
րեկան հարիւր ոսկի, պատախանեց Հռիթու-
փեռն թագաւորը։ Եթէ ուզիդ է ասածդ, ես
քեզ կը կարգեմ ախոռապետ, որպէս զի այն-
տեղ ամեն բան քո կամքով կատարուի։ Որով-
հետև իմացած լինիս, որ ձի քշելն իմ ամե-
նամեծ դուարձութիւնն է։

Մեծ պատուով ապրում էր նալը Հռիթու-
փեռնի մօտ։ Այստեղ նա հանդիպեց Վարշնէա-
լին, որ շատ տարիներ իւր սեփական կառա-
պանն էր, և որի ձեռքով Դամալեանթին երե-
խաներին ուղարկեց իւր հօր տունը։ Նա իս-
կոյն ճանաչեց նրան, բայց Վարշնէան մտքովն
էլ չէր անց կացնում, թէ այդ նոր կառապանը,
որի անունը Վահուկա էր, իւր առաջուան տէրն է։

Նալը երեկոյեան, ձիերին կերակրելուց յետով, նստեց մի հեռու տեղ ու սկսեց երդել.
Ուր է արդեօք պարկեշտ կինը
Քաղց ու դարդից հանդիստ առնում.
Իւր ամուսնուն միտ բերելիս
Տիտուր աչքերը ցած խոնարհում:
Այս մի տունը երգում էր նա տիտուր սըրտով ամեն երեկոյ: Մի օր Վարշնէան հարցըց թէ ինչո՞ւ է այդպէս երգում. նա պատասխանեց. «Ես մի մարդ զիտէի, որ բազգաւոր էր, մինչև որ լիմարացաւ: Նա իւր թագաւորութիւնը խաղի մէջ կորցրեց ու հեռացաւ իւր ամուսնուց, թէև աշխարհիս վրայ ոչ մի կին իւր զեղեցկութեամբ ու շնորհքով կարող չէ այդ կնոջը հաւասարուել: Աշխարհիս երեսին երկար թափառեց նա՝ սրտամաշ կոկից տանջուելով: Նա այս երգը շատ էր երգում, ևս նրանից սովորեցի և այժմ երգում եմ»:

19. Յ Ա Յ Տ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Երբ որ Բիման լսեց, թէ Նալը իւր աէլութիւնը խաղի մէջ կորցրել է ու յետոյ իւր ամուսնու հետ միասին անտառն է քաշուել, ժողովեց իւր բրամաններին և առաց նրանց.

«Օ՛ն, սրբազան հայրել, գնացէք, ամբողջ աշխարհը ման եկէք, վինտուեցէք իմ զաւակին, Գամավեանթուն և իւր ամուսնուն: Ով որ նրանց երկուսին միասին ալստեղ բերի, կը ստանայ ինձնից հազար եղն և մի մեծ բաժին հող: Եթէ չչաջողուի նրանց ալստեղ բերել, ես հազար եզ կը տամ նրան, ով որ ինձ կ'ասի թէ պրտեղ են նրանք»:

Հարիւրաւոր բրամաններ իսկոյն և եթ ճանապարհ ընկան, աշխարհիս ամեն կողմը ցրուեցան թագաւորական զոյզին պտրտելու համար: Ճատ ման եկան նրանք, բայց իզնւր. ոչինչ չգտան: Մի անգամ բրամաններից մինը, Սուդեա անունով, պատահմամբ Զեղի քաղաքը հասաւ, որտեղ այդ միջոցին մի մեծ տօն էր կատարում: Յանկարծ նա նկատեց թագաւորի աղջրկայ, Սունանդայի կողքին մի բարձրահասակ, սևազգեստ կին. աւելի ուշադրութեամբ նայելով, տեսաւ, որ նա իւր թագաւորի աղջիկն է: Բայց նա իւր աչքին այնպէս թուեցաւ, ինչպէս փայլը կորցրած արելը: Բրամանն ուրախացած խօսեց ինքն իրեն. «Ո՛հ դու աղօտացած գոհայր, լուսով եմ, որ քո լուսը շուտով նորից կը շողողայ այնպէս, ինչպէս փեսալընտրութեանդ օրը: Նա մօտեցաւ Գա-

մայեանթուն, երբ սա վշտահար, միայնակ կանգնած էր իւր մօտ, ու ասաց. «Նախիք ինձ, Գամայեանթի, տես, քո եղբայրների բարեկամն եմ, այն բրամանը, որին քո հայրը յարդում է: Միտքդ չէ զալիս Սուդեան: Ես քո հօր համանով քեզ փնտռելու եմ եկած: Զերոնք ամեն քըն էլ՝ հայրդ, մայրդ, եղբայրներդ ու որդիքըդ ողջ առողջ են. միմիայն մի հոգս ունին նրանք, որ չղիտեն թէ դու բաղդաւո՞ր ես արդեօք, թէ ոչ: Հարիւրաւոր բրամաններ են հօրդ պատռէրով աշխարհիս ամեն կողմն ուղարկուած, որ քեզ փնտռեն: Ես քեզ զտայ, դրա համար ես աստուածներին առատ զոհ պիտի բերեմ»:

Գամայեանթին իւր որդիների, իւր հօր ու եղբայրների անունը լրելուն պէս՝ արտասուքով լցուեցաւ և հարիւր անդամ կրկին ու կրկին հարցուփորձ արեց իւր սիրելիների մատին: Այդ միջոցին Սունանդան մօտ եկաւ ու լսեց Գամայեանթու՝ բրամանին ուղղած խօսքերը: Խորոյն վագեց, զնաց մօր մօտ ու նրան պատմեց իւր տեսածն ու լսածը: Թագուհին ասաց. «Եթէ քո ասածն ուղիղ է, ուրեմն մեր հիւրը մեր մօտիկ ազդականն է, իմ քրոջ աղջիկը»: Կամոտեցաւ Գամայեանթուն, ու բրամանին ասաց.

«Քուրմ, ասա ինձ այս աղնիս կնոջ հօր ու ամուսնու անունը: Ազ և պատմիք ինձ, ո՞ր բազդի բերմամբ սա իւր ընտանիքից հեռացաւ, կամ դու ինչպէս ճանաչեցիր որան այս սգուռո՞րի հաղուստում»:

Քուրմը, թագուհու կողքին նստելով, պատմեց նախիք և Գամայեանթու անցքը մինչեւ նրանց փախուստը: Այնուհետև պատմեց՝ թէ ինչպէս այդ տիտար համբաւը հասաւ Բիմայի ականջը, որ արդէն հարիւրաւոր բրամաններ ուղարկել է աշխարհիս ամեն կողմը նախին ու Գամայեանթուն փնտռելու: Ի վերջոյ իւր պատմութիւնն այս խօսքերով վերջացրեց. «Ես էլ շատ տեղ ման եկայ, մինչեւ որ իմ բաղդից այս քաղաքը հասավ: Տեսայ այս աննմանին և խորոյն ճանաչեցի: Չէ՞ որ ոչ մի տեղ սրա նման մի կին չկայ, մի կին, որ իւր ճակատին կրէր վսեմութեան բնածին դրոշը, որ յայտնի է բրամայի որդիներին»:

Այդ խօսքի վրայ Սունանդան մօտեցաւ Գամայեանթուն և ձեռքով նրա երեսի քօնն ու մազերի խոպոպիքը հեռացրեց ճակատից, որ իսկոյն մեղմիկ լուսնի նման փայլեց: Երկուսն էլ իրարու փաթաթուեցան, վշտից ու ուրախութիւնից լաց լինելով: Լալով մօտեցաւ և

թագուհին ու գլկեց Գամայնանթուն: Երեքը
միասին արտասուքով ողողուած կանդնած էին,
մի խօսք չէին կարողանում խօսել: Ի վերջոյ
խօսեց թագուհին. «Հազար բարև քեզ, դու իմ
սիրեցեալ քրոջս զաւակ: Այն, դու նրա զաւակն
ես, այ աննման աղջիկ: Քո մայրն ու ես Սու-
դաման հզօր թագաւորի աղջկերքն ենք: Քո
մօրը Բիմայի հետ պսակեցին, իսկ ինձ Վիրա-
վահուն ամուսին առնելով՝ այս երկիրը բերեց:
Ես քեզ տեսել եմ երեխայ ժամանակդ Գաղառ-
նայում, ուր քո մայրն ու ես իրարու այցելու-
թեան էինք դնացել: Քո դէմքը մտքումս
մնաց, և այդ լիշողութիւնն էր, որ իմ սիրտն
ուրախութեամբ լցրեց, հենց որ քեզ տեսայ:
Բայց ինչ կը կարծէի, թէ դու Գամայնանթին
ես, որին երջանիկ դիտէի նալի թագաւո-
րութեան մէջ: Մնա ինձ մօտ. ճշմարի-
տըն եմ ասում, հարազատ աղջկանս պէս կը
պահեմ քեզ»:

Գամայնանթին պատասխանեց. «Ախ, այժմ
որդիներիս կարօտն եմ քաշում սաստիկ, ուստի
աղաջում եմ, ինձ ցոյց տուած բոլոր սիրոյդ
վրայ աւելացրու և այս հրամայիր, ինձ հա-
մար մի կառք պատրաստեն, որ ինձ իմ
հալրենիքը տանէ»:

Գամայնանթու ցանկութիւնը կատարուե-
ցաւ, և նա մի քանի օրից յետոյ ճանապարհ
ընկաւ դէպի իւր հալրենիքը:

20. Փ Ա Ռ Ն Ա Գ

Գամայնանթին յաջողութեամբ հասաւ իւր
հալրենիքն ու մեծ ուրախութեամբ ընդունուե-
ցաւ իրենց տանը: Նրա հալրն այնքան բաղ-
դաւոր զզաց ինքն իրեն, որ իւր աղջկանը բե-
րող բրամանին ասաց. «Հազար եզն ու մի մեծ
հող խոստացայ ես իմ աղջկանս և իւր ամուս-
նուն գտնող բերողին: Թէե դու մենակ Գա-
մայնանթուն բերեցիր, այնու ամենայնիւ դու
այդ պարտեն ամբողջապէս կը ստանաս»:

Հետևեալ օրը Գամայնանթին ասաց իւր
մօրը. «Եթէ աւգում ես, որ ես կենդանի մնամ,
շտապիր իմ ամուսնուս գտնել տալ»:

Թագուհին լացից հեկեկալով դնաց իւր
ամուսնու մօտ ու խօսեց. «Գամայնանթին այն-
քան նուիրուած է նալին, որ կը մեռնի, եթէ
նա չվերադառնայ: Աւդարկիր ուրեմն ծառա-
ներիդ, որ նրան գտնեն»:

Բիման իսկոյն և եթ սուրհանդակներ ու-
ղարկեց, բրամաններին կանչել տուաւ և ասաց

նրանց .«Ուր որ Նալին, զտնի ճիշտ այնպէս պարգև կը ստանալ, ինչպէս Սուզեւան ստացաւ»:

Տրամաններն իսկոյն պատրաստուեցան ճանապարհ ընկնելու, դիմեցին Գամայնքանթուն ու ասացին. «Այժմ զնում ենք Նալին զտնելու, եթէ որ և է փափագ ունիս, ասա»:

Գամայնթին պատասխանեց. «Ուր որ գնաք, այս խօսքերն ասացէք՝

Սիրող սրտիկը մի սիրո է փնտռում,
Հալաւի կէսը իւր կէսն է խնդրում:
Ինչու ես այդքան ինձնից հեռացել,
Ինձ ցաւերի մէջ թաղել, զնացել:
Այս խօսքերից յետոյ լաւ նայեցէք ձեզ լրսող մարդկանց երեսին: Ով որ Նալին ճանաչի, թող առանց նրան նկատել տալու խոլոյն հեռանալ նրանից և ինձ մօտ դալ»:

Քուրմերը գուրս ելան ու ցրուեցան ամեն կողմը:

Անցել էր մի ամսից աւելի, երբ մի օր բրամաններից մինը, Փառնադ անունով, վերադարձաւ Վիդարբա քաղաքը և ինզրեց իսկոյն և եթ Գամայնթուն ներկայանալ: Նրա խնդիրը կատարեցին, և նա, Բլմալի աղջկանը խոնարհաբար ողջունելուց յետոյ, այս պէս խօսեց.

«Ես դնացի Ալոդիա, Հովիթուվիեռն թագաւորի մօտ: Նրա և իւր շրջապատող մարդկանց առաջ ասացի ձեր խօսքը: Բայց նրանցից ոչ մէկի դէմքը չփոխուեց և ոչ ոք ոչինչ չասաց: Բայց երբ ես սրահը գուրս եկայ, մօտեցաւ ինձ թագաւորի ծառաներից մինը: Վահուկա է այդ տղեղ, կարճաբազուկ մարդուանունը, որ թագաւորի ձիերն է կառավարում, և զիտէ մի օրուայ մէջ հարիւր մղոն երթալ կառքով: Այս քաշելով չորս կողմը նայեց նա, որ տեսնէ թէ մարդ չկայ այնտեղ, ու լետոյ արտասուելով ասաց ինձ. — Աղնիւ կինը երբէք ոիս չէ պահում իւր մարդու դէմ, եթէ մինչեւ անգամ մարդը իւր կնոջը թողած լինի: Այն ազնիւ կինը, որին ես ճանաչում եմ, մտաբերում է թէ ինչպէս անգութ ճակատագիրը հալածում էր իւր ամուսնուն, թէ ինչպէս նա իւր հագուստն անգամ կտրցեց, և այդ կինը չէ բարկանում. նրա վրայ, որ գառն լալիս է իւր թշուառ վիճակը:

Այս ասաց թէ չէ, խոկոյն հեռացաւ. իսկ ես ծառաններից տեղեկանալով թէ ով է այդ մարդը, անմիջապէս ճանապարհ ընկայ դէպի յետ»:

Գամայնթին արցունքն աչքերին վազեց գէպի իւր մալըն ու զոչեց՝ Պայր, բաղդաւոր եմ

ես, որովհետև զիտեմ որտեղ է Նալը: Այժմ դժան զաւակիս և օգնիր ինձ, որ ես նրան տեսնեմ: Թոնդ Սուզեան, որ ինձ զտաւ, բերեց այստեղ, գնայ իմ ամուսնուն էլ բերէ:

Դամայեանթու անկեղծ սէրը դէպի իւր ամուսինը՝ այնքան շարժեց մօր սիրտը, որ նա լաց եղաւ և ասաց. «Ես ամեն բան կ'անեմ, միայն թոնդ հայրդ ոչինչ չնկատի»:

Սուզեային կանչեցին, և մայրը նրան ասաց. «Սուզեա, դու որ իմ զաւակիս դտար ու բերեցիր, քեզ եմ ընտրում դարձեալ, որ երթաս Նալին բերես և իւր ամուսնուն յանձնես: Իմացած լինիս, որ Նալը Այսդիայում Հռիթուփեռն թաղաւորի մօտ կառապան է: Գնա Հռիթուփեռն թաղաւորի մօտ և իբր թէ դիպուածով ասա՝ Բլման Դամայեանթու համար կըրկին փեսայընտրութեան հանդէս է պատրաստում, և ամեն երկրից թաղաւորներ ու թագաւորի որդիք են ժողովւում: Եթէ թաղաւորը քեզ հարցնի, թէ որ օրն է նշանակած փեսայընտրութիւնը, դու զարմացած ձևանարդ, ասա՝ ինչպէս, միթէ քեզ յայտնի չէ այդ: Փեսայընտրութիւնը վաղն է: Եթէ ցանկանում ես ներկայ լինել, արքայ Հռիթուփեռն, դու պիտի այնպիսի կառապան ունենաս, որ կարողա-

նալ մի օրաւմ հարիւր մզոն ճանապարհ կտրել: Եթէ քեզ Հռիթուփեռնը հարցնէ, թէ որտեղից դիտես այդ, ասա՝ Դամայեանթին ինքն ինձ առաջ»:

21. ՈՒՂԵԽՈՐՈԽԹԻՒՆ

Երբ Սուզեան՝ Հռիթուփեռն թագաւորի մօտ հառնելով՝ դանաղան նոր համբաւներ բերեց նրան, յանկարծ սկսեց, իրը դիպուածով, Դամայեանթու մասին էլ խօսք բաց անել և ի միջի ալլոց ասաց, թէ վաղը նրա երկրորդ փեսայընտրութեան հանդէսն է: Հռիթուփեռնը, այս լսելուն պէս, տեղիցը վեր թռւաւ և բարձրը ձախով կանչեց իւր կառապան Վահուկալին: Կառապանն անմիջապէս ներս եկաւ, և Հռիթուփեռնը քաղցրութեամբ ասաց նրան. «Վահուկա, այժմ դու պիտի վարպետութիւնդ ցոյց տաս: Եթէ կարող ես, այսօր և եթ տար հասցրու ինձ Վիգարբա քաղաքը, որովհետև վաղը Դամայեանթու երկրորդ փեսայընտրութիւնն է»:

Երբ Նալն այդ լսեց, կարծես սիրտն ու զում էր պատռուել: Վահ զիսիս, ասաց նա ինքն իրեն, Դամայեանթին իւր թշուառութիւնն է»:

թեան մէջ խելքը կոբցրել է: Վայ ինձ, եթէ
նա երկրորդ ամուսին առնելու յանցանքը դու-
ծէ: Իրաւ է, իմ արածն էլ մեծ յանցանք
է, բայց կնոջ հաւատարմութիւնն էլ երերուն
եղեղնի է նման: Բայց նա, գոնէ ի սէր լոր
դաւակների, չպիտի մեկնէր իւր ձեռքը մի ու-
րիշ մարդու: Բայց զուցէ այդ բոլորը մի խո-
րամանկ միջոց է ինձ, Վիդարբա քաղաքը տա-
նելու համար: Ե՞հ, շուտով ամեն բան կ'իմա-
նամ, որովհետեւ հենց իմ նպատակի համար
թագաւորին իւր ժամանակին տեղ կը հասցնեմ:
Այդ մտածմունքի մէջ, ձեռքերը կրծքին խա-
չած, խոնարհ զլուխ տուաւ թագաւորին և
ասաց՝ այն, քաջ արքայ, այսօր և եթ կը հասցնեմ
քեզ Վիդարբա քաղաքը:

Երկուսն էլ փսկոյն գնացին թագաւորա-
կան ձիերի ախոռը, որ ամենալաւ ձիերն ըն-
տրեն: Նալն առաջ քաշեց չորս լզար ձիեր,
որոնց մէջ, սակայն, եռում էր ոյժ ու եռանդ:

Թագաւորը դրեթէ զալրացած կանչեց.

— «Ի՞նչպէս կարելի է այդ տեսակ լրար ձիեր
ընտրել այնպիսի մեծ ճանապարհի համար:

Նալը պատասխանեց.

— Սրանցից ամեն մէկը տասը հատ բարի
նշաններ ունի վրան՝ մէկը ճակատին, երկուսը

կրծքին, երկուսը կողերի վրայ, երկուսը աղգր-
ների վրայ և չորսը սմբակների վրայ: Այդ էր
պատճառը, որ ես սրանց ընտրեցի: Եթէ դու
ուրիշ ձիեր ես ցանկանում, ես ուրիշները կը-
րերեմ:

— Ոչ, ասաց թագաւորը. թող քո ընտրած
ձիերը լինին:

ՀՀ. ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Երբ Նալը չորս ձիերը կառքը լծեց, Հոփ-
թափեռն թագաւորը հեծաւ, բազմեց իւր
տեղում: Նալը խնդրեց, որ կառապան Վարշ-
նէան էլ հետները զայ: Թագաւորը համաձայ-
նեց, և Վարշնէան նստեց կառքի մէջ: Նալը
մի ստիւնով իւր տեղում նստեց և զօրեղ ձայ-
նով զոռաց ձիերի վրայ.

Զեղ եմ ասում, ձիեր, լաւ ականչ դրէք,
Այսօր և եթ մեզ Վիդարբա հասցըք:
Այդ խօսքերի վրայ ձիերը դողացին ու չո-
քեցին: Նալը սանձերը մի անգամ թափ տա-
լով ստքի հանեց նրանց ու յետով փոփոխակի՝
մէկ քաղցը խօսքերով, մէկ խիստ զոռալով,
առաջ քշեց: Ձիերը թեաւոր թռչունի պէս
առաջ սլացան: Հոփթափեռնը զարժացած

մնաց: Իսկ Վարշնէան ասում էր իւր մտքումը՝
այս ի՞նչ է, արդեօք Նալը չէ մեզ տանողը:
Չէ որ ոչ ոք ձի քշելու արհեստի մէջ նրան չէ
հասնում: Գուցէ նրա կերպարանքը փոխուել է:
Կամ չինի թէ աստուածների թագաւորի կա-
ռապանն է ոտ, որ՝ Վահուկայի կերպարանքն
առաջ աշխարհը է եկել չոփթուփեռնին ծա-
ռայելու համար: Զիերը՝ փրփուրի ու քրտնքի
մէջ թաթախուած՝ կայծակի արագութեամբ
վազեցնում էին կառքը: Յանկարծ քամին խլեց
թագաւորի վերարկուն: Նա կանչեց՝ Վահուկայ,
կառքը կանգնեցրու, որ Վարշնէան երթայ վե-
րարկուս բերէ:

— Ել անկարելի է, պատասխանեց Նալը,
մենք արդէն մի մզոն հեռու ենք վերարկուից:
Փոքը ինչ յետոյ թագաւորը խօսք բաց
արեց. «Վահուկա, յոիր, ես էլ քեզ իմ արուես-
տը պատմեմ: Մի մարդ յա տմեն բան չի կա-
րող իմանալ: Գու վարպետ ես կառք քշելու
մէջ, ես էլ մի ուրիշ բան զիտեմ: Ճեսնում ես
հեռուում այն ծառը: Ես կարող եմ մէկ մտիկ
տալով իմանալ, թէ նա ո՞րքան տերեւներ ու
ո՞րքան պտուղներ ունի: Հարիւր երեք պտուղ
և երկու հարիւր երկու տերեւ վայր են թա-
փուել: Ֆառի վրայ մնում են դեռ էլլի հինգ

միլիսն տերեւ և երկու հազար իննսուն երեք
համարուղի»:

Ֆառին մօտենալուն պէս՝ Նալը կանգնե-
ցրեց կառքը և ասաց. «Անհասկանալի է թւում
ինձ ասածդ, ներիլ ինձ, Տէր, և թուլ տուր,
որ կառքից վայր իջնեմ, պտուղներն ու տե-
րեւները համարեմ: Թող Վարշնէան սան-
ձերը բռնէ»:

Հոփթուփեռնը վախեցաւ և ասաց՝ Մենք
կուշանանք:

Նալը պատասխանեց՝ Մի փոքը համբերէ,
Տէր իմ, կամ, եթէ չես կամենում, թող Վարշ-
նէան շարունակէ ճանապարհը:

Թագաւորը չէր ուզում այն օրը իւր ան-
ձը մի ուրիշին յանձնել, այդ պատճառավ փա-
ղաքշական եղանակով ասաց. «Ո՞վ կարող է
քեզ պէս կառք վարել: Միմիայն դու կարող ես
այնպէս անել, որ ես ալսօր, գեռ արեւը մայր
չմտած, Վիդարբա հասնեմ»:

— Գու կը հասնես, պատասխանեց Նալը,
բայց նախ և առաջ ես պիտի համարեմ:

Թագաւորն ասաց.

— Ուրեմն գոնէ բաւականացիք մի ճիւղի
պտուղները համարելով: Ընդ ամենը եօթը ճիւղ
կայ, իւրաքանչյւրը նոյն չափով պտուղներ ունի:

Նալը համարեց եօթը ճիւղերի պտուղները և ստացաւ թագաւորի ասած թիւը: Ստուժիկ զարմանալով ասաց նա.

— Այն, Տէր իմ, ճիշտ այնքան պտուղ կայ, որքան գու ասացիր: Այժմ տերեւները պիտի համարեմ:

Թագաւորը դարձաւ բելով ասաց.

— Բաւականացիր այդ մի փորձով: Միթէ կառկածում ես իմ արուեստի մասին:

— Ի՞նչ արուեստ է այդ, ով թագաւոր, հարցրեց Նալը:

Որպէս զի, որքան կարելի է, շուտով առաջ երթան, թագաւորը պատասխանեց.

— Իմացիր ահա, որ ես համարելու և քուեախաղի դադանիքը դիտեմ:

— Եթէ դու այդ զիտես, ուրեմն մենք կարող ենք այստեղից հեռանալուց առաջ փոխանակութիւն անել: Դու տուր ինձ քո արուեստները, իսկ ես քեզ իմ կառք վարելու արուեստը կը տամ:

Թագաւորն ուրիշ ճար չունէր. պէտք է Նալին իւր գաղտնիքն աւանդէր: Յետոյ ասաց.

— Այժմ շտապիր: Քո արուեստը յետոյ կը սովորեցնես ինձ:

Այն բռպէին, երբ Նալը համարելու արուեստը սովորեց, իսկոյն իմացաւ ծառի վրանի տերեւների թիւը, և հենց այդ բռպէին էլ դուրս կրաւ նրա ներսից Քալին, այն չար գեղ, որ նրան այնքան թշուառութեան մէջ էր ձգել:

Քալին մտաւ ծառի մէջ, որի տերմաներն իսկոյն գեղնեցին:

Նալն ուրախ սրտով կառք նստաւ, և ձիերն աւելի արագ վազեցին:

23. Ք Ե Զ Ի Ն Ի

Սրել գեռ չէր մայր մտել, երբ Նալը հասաւ Վիդարբալի քաղաքակուռը: Ծառաները վաղելով իմաց արին Բլմա թագաւորին, որ իսկոյն և եթ հրամայեց դուռը բանալ: Եւ ահա կառքն ահազին զզրդիւնով քաղաքի մէջ արշաւեց: Թագաւորի ախուռում կանգնած էին Նալի ձիերը, որոնց ուղարկել էր Գամայեանթին: Սրանք կառքի որոտումը լսելով՝ սկսեցին ուրախ խըխնջալ ինչպէս առաջ, երբ Նալը մօտենում էր նրանց: Նալը՝ կամարակապ անցքերի միջով անցնելով՝ կառքը քշեց դէպի

պալատի բակը: Կառքի գլորուելու որոտմունքն
այնպէս ուժզին էր, որ ախոռի փղերն ու
պարսպի վրայի ուրբամարդները կարծեցին թէ
փոթորիկ պիտի վրթի: Փղերն ահազին աղ-
մուկով վեր բարձրացրին իրենց կնճիթը, իսկ
սիրամարդներն իրենց դլուխը:

Դամայեանթու ականջին էլ հասաւ այդ
աղմուկը: Նա նստած տեղից վեր թռաւ
և ասաց՝ ուս նալն է. ոչ ոք չէ կարող այդ-
պէս կառք քշել, բացի իմ ամուսնուց: Այս ու
այն կողմ վազգելով կանչում էր նա՝ ոհ, եթէ
ալսօր քեզ չտեսնեմ, նաև, իմ սիրելիս, ես կը
մեռնեմ: Եթէ ալսօր դու ինձ քո դիրկը չ'առ-
նես, կրակի բոցերը պիտի զրկեն ինձ: Քո
պատճառով կրած վշտերիս ոչ մէկը չեմ լիշում
այժմ, լիշում եմ միայն այն առաքինութիւն-
ներդ, որոնցով դու ինձ երջանկացնում էր:

Դամայեանթին այս ասելով վեր ելաւ պա-
շտի ատամնաւոր պարսպի վրայ, որ երկուոր-
ներին տեսնի: Քեզինին, նրա աղախինը, հե-
տեւց նրան: Կառքը նոր էր կանդ առել: Դա-
մայեանթին երեք մարդ տեսաւ կառքի վրայ:
Վայ ինձ, ասաց նա իւր աղախնուն, տեսածս
Հոկթուփեան թագաւորն է, ու կառապան
Վարշնէան, իսկ երրորդը նալը չէ:

Վարշնէան ու նալը կառքից վայր թռան
ձիերի կապերը բաց անելու համար: Հոկթու-
փեան թագաւորը գեռ ևս նստած էր իւր տե-
ղում և զարմացած ու տարակուսած նայում էր
իւր չորս կողմը, որովհետեւ ոչ մի տեղ հան-
գիսի նշան չէր նկատում, և բակումն էլ ոչ մի
օտար կառք էր երևում, և ոչ մի օտար ծառայ:

Այդ միջոցին Բիմա թագաւորն առաջ եկաւ
իւր հիւրին ողջունելու: Հոկթուփեանը տեսնե-
լով, որ նրա հետ ոչ իշխաններ կան և ոչ բրա-
մաններ, հասկացաւ, որ փեսալընտրութեան
հրաւէրը սուտ է եղել, և չէր վստահանում այդ
մասին խօսք բաց անել: Բիման մօտեցաւ կառ-
քին, ձեռքը մեկնեց Հոկթուփեանին, իսնդրեց
վայր իջնել և հարցրեց նրանից այդ այցելու-
թեան պատճառը: Հոկթուփեանը պատասխա-
նեց թէ ցանկանում էր անձամբ նրա ողջու-
թիւնը հարցնել: Բիման ներաւ տարաւ հիւրին
իւր տունը և արժանավայել պատուով ընդունեց
նրան: Նալը, որ այդ միջոցին ձիերը թագաւո-
րական ախոռն էր տարել, վերադարձաւու
նստեց կառքի վրայ:

Այժմ Դամայեանթին գարձաւ իւր աղախ-
նին ասաց. «Քեզինի, գնա այն տիսուր նստած
կառապանի մօտ ու լաւ քննիր նրան: Թէ և

նա տեսքով տղեղ է, բայց դրա մի շարժուածքը լիշեցնում է ինձ նալին; Ի վերջոյ չմոռանաս ասել նրան այն խօսքերը, որ բրամաններն աշխարհիս ամեն կողմերը տարածում են»:

Քեզինին իջաւ բակը, մօտեցաւ կառքին, ողջունեց նալին ու ասաց.

— Դամայեանթին, իմ տիրուհին, իր ցանկանար իմանալ, թէ ինչու, դու ովկ քաջ, քո թագաւորին այստեղ ըերեր:

— Որպիհետև իմ թաղաւորին լուր հասաւ, թէ վաղը Դամայեանթու փեսալընտրութեան օրն է, պատասխանեց նալլ:

Աղախինը շարունակեց իւր հարցուփորձը.

— Ասա ինձ, ովք է այն միւսը, որ կառքի մէջ նստած էր, և ովք ես գու:

— Են միւսի անունն է Վարշնէա, պատասխանեց նալլ: Մի ժամանակ նա ծառայում էր նալ թագաւորին, քանի որ նալը թշուառութեան մէջ չէր ընկել: Այժմ նա կառագուն է Հախթուփեռն թագաւորի մօտ, որի մօտ ես էլ եմ իբրև կառավան ծառայում: Աղախինը հարցրեց.

— Վարշնէան քեզ երբէք ոչինչ չէ պատմել նալի մասին: Բացառական պատասխան ստանալով, Քեզինին շարունակեց.— Բրամանները

փնտուում են նրան և աշխարհիս ամեն կողմերը ման գալով հետեւեալ խօսքերն են ասում ամեն տեղ.

Սիրող սրտիկը մի սիրու է փնտուում, չալաւի կէսը իւր կէսն է խնդրում. ինչու ես այդքան ինձնից հեռացել, ինձ վշտերի մէջ թողել, գնացել:

Այդ խօսքերին նալը պատասխանեց այնպէս, ինչպէս պատասխանել էր Փառնաղին.

— Ազնիւ կինը թշուառութեան մէջ ինքըն է իւր գլուխը պահում: Ազնիւ կինը երբէք ոխ չէ պահում իւր մարդու դէմ, եթէ մինչեւ անզամ մարդը թողնում է իւր կնոջը: Այն ազնիւ կինը, սրին ես ճանաչում եմ, մտարերում է թէ ինչպէս ճակատագիրը հալածում էր իւր ամասնուն, թէ ինչպէս նա իւր հագուստն անզամ կորցրեց, և այդ կինը չէ բարկանում նրա գէմ, որ դառն լալիս է իւր թշուառ վեճակը: Այս խօսքերի վրայ նալի սրտի բոլոր վէրքերը բացուեցան, աչքերն արտասաւքով լցուեցան ու զլուխը ձեռքերի մէջ թաղուեցաւ:

Քեզինին շուտով վագեց դէսի իւր տիրուհին, որ իւր տեսածն ու լսածը պատմի նրան:

24. ՅԱՅՏԱՐԵՐ ՆՁԱՆՆԵՐ

Գամայեանթին նալի ասածն ու արարքը իմանալուն պէս հառաջեց ու ասաց. «Խօսքին ու արարքին նայելով՝ դա իմ ամուսինն է, իսկ կերպարանքով ոչ։ Գնա, Քեղինի, լաւ աչքի անցյալ։ Ել ոչինչ մի խօսիր, բայց նայիր թէ ինչ է անում։ Մանաւանդ լաւ ուշադրութեան առաջ արդեօք նա ունի այնպիսի հնարներ, որ ուրիշ մարդիկ չունին։ Այս էլ չմոռանա՛ նա այժմ չութուփեռն թագաւորի համար ընթրիք պիտի պատրաստի, ոչ կրակ տուէք նրան, ոչ ջուր և տեսէք թէ ինչ կ'անի»։

Քեղինին վայր վազեց, բայց կարճ ժամանակից վերադարձաւ և ուրախութիւնից վայլող դէմքով ասաց Գամայեանթուն. «Ես երբէք մի մարդ չեմ տեսել, որ այնպիսի հրաշքներ գործէր, ինչպէս այն մարդը, որին Վահուկա են կանչում։ Եթէ մի սենեակ մտնելիս մուտքը նրա հասակից ցածր է լինում, նա չէ կուանում ամենեին, այլ մուտքն է ընդարձակւում դէպի վեր։ Հայրդ տեսակ տեսակ մսեղէն ուղարկեց նրան, և նա ոկտեց իւր տիրոջ համար ընթրիք պատրաստել։ Նա ջուր ուզեց, իսկ ես արդէն բանն այնպիս էլ սարքել, որ նր-

բան ջուր չտան։ Փոքր ինչ սպասելուց ինտոյն նա նայեց անօթների մէջ, և ահա նրանց յատակից ջուրն ոկտեց բարձրանալ։ Յետոյ կրակ պահանջնեց, և երբ կրակ էլ չտառցաւ, մի վաքր յարդ առաւ, ափի մէջ արտիեց, վրան վչեց, և խելոյն վառ վառ բացեր գուրք պղծան այնտեղից։ Այդ վառուող կրակը մերկ ձեռներով տարաւ օջախը ու դրեց վայտակութիւնից տակ, որ անմիջապէս բռնկեց։ Ո՞րքան զարմացայ ես, երբ այդ բոլորը տեսայ։ Բայց ամենից զարմանալին նրա վերջին գործն էր։ Քետնի վրայ մի թառամած ծաղիկ տեսնելով, վեր առաւ, և ինչ տեսնեմ՝ ծաղիկն ոկտեց նորից վթթել ու ծաղկել նրա ձեռքում»։

Գամայեանթին ասաց. «Թա հենց նալն ինքըն է, ուրիշ ովկ կարող է լինել։ Այդ բոլոր շնորհքները նա աստուածներից ստացաւ մեր հարանիքի օրը։ Կամ միթէ կարող է մի ուրիշն էլ այդ ձիրքերն ունենալ»։

Փոքր ինչ յետոյ Գամայեանթին՝ արցունքն աչքերին՝ ասաց. «Խոհանոցից զալիս է Վահուկայի պատրաստած մոի հոտը։ Գնա մի կոտր միս խնդրիր ու բեր, որ ես ուտեմ»։

Քեղինին զնաց, բերեց տաք մոի մի կտոր։ Գամայեանթին վոքը ինչ կերաւ և ար-

տասուելով բացազանչեց. «Միշտ այս համն էր ունենաւ Նալի եփած միտք: Այս էլ տեղն եկաւ: Ո՞հ, անկատկած Նալն է նա, իմ ամուսինը: Անգութ, ինչպէս կարող ես դու այլպէս երկար մնալ անխայտ դիմակի տակ, քանի որ դու այդքան մօտիկ ես ինձ: Դիհ, Քեզինի, այժմ առ երեխաներիս ու տար նրա մօտ: Դրանով պարզ կ'իմացյուի թէ նա Նալն է, թէ ոչ»:

Քեզինին երեխաներին առաւ ու վայր իջաւ. Հայրը, նրանց տեսնելուն պէս, նրանց անունը կանչելով, առաջ վազեց, զրկեց և արտասուելով Համբուրեց նրանց: Սակայն շուտով ուշ ու միտքը հաւաքեց, դարձաւ դէպի աղախինն ու առաց. «Զարմանալի բան. ճիշտ այսպիսի մի գոյգ երեխայք ունիմ ես տանը: Մրանց տեսնելով լիշեցի իմ սիրուն դաւակներիս ու սիրոս լցուեց: Խոկ քեզ, օրիորդ, ուրիշ բան պիտի ասեմ: Քո մասին վատ բան կ'ասեն, եթէ դու այլպէս շուտ շուտ ինձ մօտ գաս գնաս: Տար այս երեխաներին ու էլ չդաս ինձ մօտ»:

25. ՏԵՍՍԿՅՈՒԹԻՒՆ

Քեզինին իւր բոլոր տեսածն ու լսածը պատմեց իւր տիրուհուն: Գամայեանթին իսկոցն զնաց իւր մօր մօտ և ասաց՝ մայր, հրամայիլը որ կառապան Վահուկան ինձ մօտ դայ, որ ես ամուսնուս մասին հարց ու վորձ անեմ:

Թագուհին կատարեց իւր աղջկայ ցանկութիւնը, և Նալին բերեցին Գամայեանթու բնակարանը: Իւր կնոջը տեսնելով, Նալը վոքը մնաց, որ ուշաթափ լինէր: Իւր կինը կանգնած էր իւր աչքի առջև սպազեստ, բայց և այնպէս լուսաշաղ, շնորհաշուք, և նայում էր իրեն արտասուալից աչերով: Նալը լուռ էր. նրա բերանը խօսք չէր դալիս: Գամայեանթին խօսք բաց արեց.

— Ասա ինձ, Վահուկա, կգտնուի արգեօք Նալից զատ մի ուրիշ մարդ, որ իւր թշուառութան մէջ անդամ իրենից անբաժան մնացող կնոջը դէն ձգէ: Աստուածների առաջ եմ ընտրել ես նրան, և նա ինձ. աստուածները լսեցին նրա երդումը, երբ նա, ձեռները սեղանի վրայ գնելով, առաց՝ հաւատաբմութեամբ պիտի պաշտպանեմ քեզ տմեն չարից ու վորձանքից մինչև կեանքիս վերջը: Բայց և այն-

պէս՝ նա ինձ թողեց, ինձ, որ իւր զաւակների մայրն եմ: Ասա ինձ, Վահուկա, ինչպէս կարողացաւ Նալն այդ անել:

Դամայեանթուն լացը խեղդեց. նա էլ չկարողացաւ շարունակել: Նալը պատասխանեց Դամայեանթուն.

— Քո ամուսինը չէր, որ իւր թաղաւորութիւնը կրոցրեց. քո ամուսինը չէր, որ քեզ թողեց: Այդ բոլորն անողը չար ողի Քալին էր: Հիմա ես եմ քեզ հարցնում, Դամայեանթի, ինչպէս կարող ես գու քո մարդուն անհաւատարիմ լինել: Թշուառական, հօրդ սորհանդակներն աշխարհի չորս կողմը լուր են տառամ, թէ դու նորից պիտի ամուսին ընտրես: Այս որ լսեց Դամայեանթին, իւր զողոցուն ձեռները կցեց իրարու ու ասաց.

— Ով Նալ, իմ թագաւոր, իմ ամուսին, միթէ կարող ես այդ կատկածն ունենալ: Քեզ էին վնտուում բրամանները բոլոր պիտութիւնների մէջ: Եղաւ որ, նրանցից մինը, Փառնադղը, զտաւ քեզ չոփթուինեռն թաղաւորի մօտ իբրև կառապան: Նա վերադարձաւ, ես մի ուրիշն ուղարկեցի քո թագաւորի մօտ՝ իմ երկրորդ վեսայընտրութեան մասին խօսք անելու: Այդ հնարադիտութիւնը դորձ դրինք քեզ

այսուղ բերելու համար: Տես, սիրելի ամուսին, այդտեղ էլ ես քեզ անհաւատարիմ չէր: Զեռդ ձեռիս մէջ առնելով երգուոմ եմ, որ ես քեզ միշտ հաւատարիմ եմ մնացել: Եթէ իմ երգումը սուստ է, թող այն քամին, որ ամեն խօսքի ու գործի վկան է, իմ կեանքը փչէ ու հանդցնէ. թող ովկիանոսների վրայ սաւաւնող վեհապանծ արևն իմ կեանքը մարէ. թող լուսինը, գիշերի արդարադատ վկանիմ կեանքը ոչնչացնէ. թող երբակի աստուածութիւնները, որոնք իշխում են երկնքի ու երկրի վրայ, թող նրանք հոգիս մարմնից լիեն, եթէ ես քեզ երբէք դաւաճանած լինմէ:

Դամայեանթին այս խօսքերն ասաց թէ չէ, ողի մէջ մի ձայն հնչուեցաւ, որ հետևեալ խօսքերն արտասանեց:

— Ոչ գործով, ոչ խօսքով, ոչ մտքով կինը քեզ անհաւատարիմ չէ եղել: Մենք աստուածներս, որոնց առջև երկրի երեսին ոչինչ բան դադտնի չէ մնում, մենք ինքներս ենք վկայում քեզ այդ:

Ալիք խօսքերից յետոյ մի խուլ շշնջիւնով ծաղկիների մի քնքովշ տարախ վայր տեղաց:

Աւրախութեան սարսուուր պատեց Նալին, և նա, լիշելով օձերի թագաւորի խօսքը, նա-

յեց փայլուն խեցեմօրթին։ Իսկոյն Վահուկան անհետացաւ և նրա տեղը կանգնած էր վայել-չակաղմ Նալն իւր իտկական կերպարանքով։ Դամայեանթին ճշաց խնդումից։ Նալը քաշեց նրան գէպի իւր կուրծքը։ — Այս, ասաց Դամայեանթին, այսօր իմ երկրորդ փեսալընտրութիւնն է, և քեզ, միմիայն քեզ է ընտրում նորից քո Դամայեանթին։ Նա լաց էր լինում, ծիծառում էր Նալի կրծքին փարած, երկուսի ուրախութիւնն ասես թէ նոյնքան մեծ էր, որքան իրենց պատկի օղը։

Գէհ, սկսեցին ինչպէքներ տալ թագաւորական պալատում և քաղաքում։ ամեն մարդ ուրախ էր, որ Նալը և Դամայեանթին նորից իրարու հետ միացան։

Հովիժուվեռնը Նալից ներողութիւն խնդրեց, որ նրան թագաւորավայել պատիւ չէր տուել։

Նալը պատասխանեց. «Ես թագաւոր չէի, երբ քեզ մօտ ծառայութեան մտայ, այլ կառապան Վահուկան էի։ Նրան դու ինչպէս հարկն էր խնամեցիր։ Իսկ դու ներիք իմ ամուսնուն և ինձ, որ դու այսուեղ եկար և միայնակ պիտի վերադառնաս, որովհետեւ Վարշնէան էլ իմ կառապանն է և չէ ուզում ինձնից բաժանուել, քանի որ ինձ դտել է։ Բայց քեզ

Համար շատ հեշտ կը լինի վերադառնալի, որովհետեւ ձիեր կառավարելու արուեստը այսօր հենց կը սովորես ինձնից։ Զէ՞որ ես պարտական եմ սովորեցնել քեզ այդ արուեստը քուէ ախաղի և Համարելու արուեստների փոխարէն»։

Երկու թագաւորներն իրարու հետ բարեկամութեան ամուր գաշն կապեցին, և Հովիժուվեռնը եօթն օրից յետու միայն մեկնեցաւ քաղաքից։

26. ՀԱՏՈՒՑՈՒՄՆ

Մի ամիս անցնելուց յետոյ՝ Նալն ասաց մի օր՝ տեսնենք այժմ կարող եմ արգեօք թագաւորութիւնս նորից ձեռք բերել։

Բիման առաց. «Լաւ չի լինիլ, որ պատերազմ սկսես։ Մտածիր թէ որքան վտանգաւոր է քեզ Համար առանց զօրքի խորթ եղբօրդ տէրութեան մէջ ոտք դնել»։

Բայց Նալն ընտրեց իրեն ուղեկցելու Համար քաջերի մի փոքրիկ խումբ և շուտով ճանապարհ ընկաւ։

Խորթեղիօր մօտ հասնելով, ասաց. «Ես նոր կալուածքներ եմ ձեռք բերել ու եկել եմ

քեզ հետ քուէախաղը շարունակելու: Թա՞ղ քուէները մէկ անգամ ձղելով մեր բաղդը վը- ճութիւ: Բայց իմացիր, որ թէկ ես թագաւորու- թիւն չունիմ զրաւ գնելու, ինչպէս դու, բայց իմ զրաւը աւելի մեծ է քոնից՝ դա իմ կինն է, Գամայեանթիւն: Սակայն այս պայմանն էլ պի- ալ ընդունենք՝ քուէախաղից յետոյ նա, որ իւր զրաւը կը կորցնէ, աղատ է իւր յաղթողին սրով մենամարտութեան հրաւիրելու»:

Փուշքարան իւր զահի վրայից ծիծաղելով պատասխանեց այս խօսքերին.

— Ես վաղուց սպասում էի, որ դու Գա- մայեանթուն պիտի զրաւ գնես: Գէհ, եկ իս- կոյն և եթ ոկտենք խաղը, որպէսկետև ես սաստիկ ցանկութիւն ունիմ քո կնոջդ ինձ սեփակա- նելու: Յիշաւի, նա է միայն ինձ պակասում, որ երջանկութիւնո կատարեալ լինի:

Նալի բոռնցքները սեղմուեցան, և նա զրեթէ պատրաստ էր այդ խօսքերի համար իւր խորթեղբօրը սրով միջից կէս անելու: Բայց ինքն իրեն պահեց և ակամայ ծածաղն երեսին ասաց.

— Խօսքերով դու իմ կնոջը տանել չես կարող. հրամայիր նարդին բերել:

Տերեցին: Երկուսն էլ ձգեցին իրենց քուէն: Փուշքարան տարուեցաւ:

— Այժմ մենամարտութիւն, զոշեց նալը: Կորցրածդ յետ վաստակիր, եթէ ուժ և քա- ջութիւն ունիս:

Երկուսն էլ սրերը մերկացրին և յարձա- կուեցան իրար վրայ: Կոխը երկար չտեսեց. մի քանի վալրկեանից յետոյ նալը Փուշքարանի սուրը ձեռից գուրս թռցրեց:

Փուշքարան ծունկ չոքեց, ձեռները կըրծ- քին խաչեց, զլուենը կախեց և ասաց գողգո- ջուն ձախով.

— Թաղաւորութիւնը քոնն է, իմ կեանքն էլ քո ձեռքումն է:

Նալը՝ բռնելով խորթ եղբօր ձեռքից, պա- տասխանեց.

— Վեր կաց, Փուշքարա, ես քեզ վրայ չեմ բարկանում: Ինձ իմ թագաւորութիւնից զրկողը, թշուառութեան մէջ ձգողը դու չէիր, այլ Քալին էր, որ երկուսիս մտքելն էլ կուրացրեց: Քեզ լինի քո կեանքը և այն քաղաքը, որ ես քեզ առաջ ընծալել էի: Գնա ու երջանիկ եղիր:

Գրան պատասխանեց Փուշքարան.


— Եղբայր իմ, քո այդ վարմունքն աստուած- ներին հաճոչք պիտի պատճառէ: Թող նրանք

Քեզ և քո ամուսնուն հարիսը տարի բաղդաւոր
կեանք պարզ են: Ես ինձ համար բաղդ կը հա-
մարեմ ինքս ինձ իմ քաղաքում քո ամենախոնարհ
ծառան անուանելու: Հաւատա՛ ինձ, եղբայր
իմ, որ ես ինձ լաւ չեմ գցում այդ գահի վրայ,
որ քուների վրայ էր կանոնած: Բայց ես քա-
ղաք վերադառնալուց առաջ պիտի ուիստ եր-
թամ Գանգէսի սրբագան ջրերին և այն քաւէ-
ները, որոնք քո ազնիւ կնոջիւ այնքան ծանք
վիրաւորանք պատճառեցին, ջրի ամենախոր
տեղը նետեմ:

Հետևեալ առաւօտը Փուշքարան տիստա-
ւորի հազուստով հեռացաւ քաղաքից:

Փոքր ժամանակից յետոյ Նալը իւր կնոջը
և զաւակներին բերեց իւր մօտ: Ճատ տարիներ
ասլրեցին այդ աղնիւ թագաւորն ու թագաւ-
հին իրենց երկրի ու ժողովրդի բարօրութեան
Համար:





1526
1527
1528^E
1529

2013

31. ԿՈՄՍ Լ. ՏՕՂԱՏՈՅ, Աստուած գիտէ՝ ով է արդարը	— 7
32. ՎԱՀՆԵՔ, Հաւատարիմ Սավիտրին, գերմ. թարգմ. Փ. Վարդանեան	— 10

Նոյն տեղում վաժառուում են նաև Բնկերութեան
նիստեւալ գրքերը

ՀՉ

1. Աւսումնաբանների առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայեանի	1 —
2. Կրքեր և նոցա ազգեցութիւնը առող- ջութեան վրայ, բժ. Ա. Բաբայեանի. — 30	
3. Բոնի միութիւն Հայոց Աեհաստանի. . . .	2 —
4. Թորոս Աւոնի, Ռեբենցի.	1 —
5. Թէոդորոս Թշտունի, Ռեբենցի.	1 —
6. Երկունք Թ., դարու, Ռեբենցի.	1 —

Մամուլի տակ են՝

Հենրիխ Պետուազի, Ամենարդ և Գերոբուդ
ՄԱՅՈ ԽՐԱԿԻՆՅԱՅՆ, Նաւի փոքրաւորը:

Գինն է **ԳՈ** ԿՈՊ.